1. Վանաձորի ֆաղափաղեսի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն՝ բեկանել ՀՀ սնտեսական դասարանի 08.08.2006թ. վճիռը՝ 2005 թվականի երկրորդ եռամսյակից մինչև 2006թ. առաջին եռամսյակն ընկած ժամանակահատվածի համար հայցի մերժման մասով, և գործն այդ մասով ուղարկել նույն դասարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման լրացից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության ֆաղափարական գործ թիվ 3- 1760(ՏԴ)  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌ 2006թ.  
Ֆաղափարական գործ թիվ Տ-1912/2006թ.  
Նախագահող դատավոր՝ Կ.ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղափարական դալարը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՉՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2006թ. սեպտեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով «ԱՐՄԵԼ Գրուդ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքն ըստ դիմումի «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ-ի՝ ՀՀ մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի 05.05.2006թ. որոշումն անվավեր ճանաչելու դիմումի մասին ֆաղափարական գործով ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱՆԻ 06.07.2006թ. կայացրած վճռի դեմ,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դատարարական նախադասմունքները.**

Դիմելով ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱՆ՝ «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ-ն դիմում է անվավեր ճանաչել ՀՀ առևտրի և ՏՆՏԵՍԱԿԱՆ զարգացման նախարարության ՀՀ մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի՝ «ԱՐՄԵԼ Գրուդ» ՓԲԸ-ի անունով «GRANDOS» բառային աղբյուրային նշանը «սուրճ» աղբյուրային նկատմամբ 2003 թվականից հանրահայտ ճանաչելու մասին 05.05.2006թ. որոշումը:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱՆԻ 06.07.2006թ վճռով հայցը ամբողջությամբ բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել «ԱՐՄԵԼ Գրուդ» ՓԲԸ-ն:

Վճռաբեկ բողոքին դատաստան չի ներկայացվել:

---

---

**2. Վճռաբեկ բողոքների հիմքը, փաստարկները և դաշխանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը ֆնսվում է հետևյալ հիմքի սահմաններում ներհիշյալ հիմնավորումներով:

ՀՀ սնտեսական դատարանը սխալ է մեկնաբանել «Ադրանֆային և սդասարկման նշանների, ադրանֆների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 21.1 հոդվածի 2-րդ մասը, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

*Բողոք բերող անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.*

ա/ «Ադրանֆային և սդասարկման նշանների, ադրանֆների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 21.1 հոդվածի 2-րդ մասի իմաստով «թվականի դրությամբ» արտահայտությունը չի կարող կոնկրետացվել, քանի որ ադրանֆային նշանների հանրահայտությանն ուղղված գործողությունների իրականացման (ստորոգյան) ժամանակաշրջանը և այն ժամանակահատվածը, որում արդեն նշանը ձեռք է բերել հանրահայտություն, կարող են տեղի ունենալ մեկ արվա արբեր ժամանակահատվածներում և հանրահայտության հասնել հենց նույն արում: Հանրահայտության համար սահմանված ժամանակը իրավունք առաջացնող ժամկետ է, և նկատի ունենալով, որ հանրահայտությունը բարունակական բնույթ ունեցող, տակալ գործընթաց է, ուստի դատարանը դատարար էր նկատի ունենալ այդ ժամկետի ոչ միայն սկիզբը, այլև ավարտը: Պատասխանողի որոշմամբ ադրանֆային նշանի 2003թ.-ից հանրահայտ ճանաչելու հարցում միանշանակ կարելի է հիմք ընդունել սլյալ արվա ցանկացած օր՝ ներառյալ 31.12.2003թ.:

բ/ Դատարանը կիրառել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները, որոնք կիրառման ենթակա չէին:

ՀՀ արտոնագրային վարչության 13. 10. 2000թ. թիվ 58 հրամանով հաստատված «Ադրանֆային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու մասին» կարգի 2.2 կետի «ե» ենթակետի դաշխանջը, ըստ որի ադրանֆային նշանի հանրահայտության վերաբերյալ սդառողների հարցում կատարելիս դեմ է հաշվի առնվել Հայաստանագրի կողմից մշակված հրահանգները: Նման հրահանգներ մշակված և հրատարակված չեն: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասը կարգավորում է այն իրավիճակը, երբ իրավական ակտում նախատեսված նորմի դաշխանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն դայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ:

գ/ «Ադրանֆային և սդասարկման նշանների, ադրանֆների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 21.1 հոդվածի 2-րդ մասի իմաստով որոշակի արածմում արածվածությունը՝ որդես ճանաչման իմդերսիվ դայման, չի նախատեսվում: Նման ճանաչման համար դատարարի դայման է սահմանում է միայն սդառողների համադատասխան քջանակի համար լավ հայտնի լինելու հանգամանքը: «Սդառողների համադատասխան քջանակ» տերմինի մեկնաբանությունը սրված է ՀՀ Արտոնագրային վարչության 13.10.2000թ.-ի թիվ 58 հրամանի 1.1 կետում, ըստ որի՝ «սդառողների համադատասխան քջանակներ» հասկացությունն իր մեջ ներառում է՝ ադրանֆների և (կամ) ծառայությունների հնարավոր սդառողներին, ադրանֆների և (կամ) ծառայությունների արածման ուղիների սդառողներին մասնակցող անձանց, ադրանֆներով և (կամ) ծառայություններով (որոնց նկատմամբ օգտագործվում է ադրանֆային նշանը) գրադվող գործարար քջանակներին: Այսինքն՝ «Ադրանֆային և սդասարկման նշանների,

ադրանքների ծագման շեղանունների մասին» ՀՀ օրենքը ընդհանրապես չի սահմանում ՀՀ ողջ սարածքում ադրանքային նշանի՝ որդես սլյալ անձի կողմից արտադրող նշանի ադրանքների սարքերակման (անհասականացման) միջոցի հանրահայտության ճանաչում, այլ մասնանշում է միայն սղառողների համադասասխան եղանակի մոտ հանրահայտ լինելու մասին:

Բողոք բերող անձը գտնում է, որ վերը նշված խախտումների արդյունքում դասարանը ներկայացված ադրանքային գերակշիռ մասը համարել է անթույլատրելի և անվերաբերելի, ինչի հետևանքով ՀՀ ֆադաբացիական դասավարտության օրենսգրքի 53-րդ հոդվածի դահանջներին համադասասխան չի հետագոսել ներկայացված ադրանքային:

Վճռաքել բողոք բերող անձը վերը նշված հիմքերով խնդրել է բեկանել ՀՀ սնեսական դասարանի 11.08.2006թ վճիռն ամբողջությամբ և գործն ուղարկել ՀՀ սնեսական դասարան՝ այլ կազմով նոր քննության:

**3. Վճռաքել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր.**

Վճռաքել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հեսկյալ փաստեր՝

ա) «GRANDOS» բառային ադրանքային նշանը ՀՀ մսավոր սեփականության գործակալության կողմից ԱԾՄԴ-ի 30-րդ դասի բոլոր ադրանքների /այդ թվում սուրճի/ համար «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ-ի անունով գրանցվել է 08.06.2005թ.:

բ) «Գրանդ Քենդի» ՀԶ ՍՊԸ-ն նաև հանդիսանում է ԱԾՄԴ-ի 30-րդ դասի բոլոր ադրանքների /այդ թվում սուրճի/ համար գրանցված «ГРАНДИОЗ», «GRANT'S», «GRAND'S» ադրանքային նշանների սեփականասեր:

գ) ՀՀ մսավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի կողմից 05.05.2006թ.-ի որոշմամբ «ԱՐՄԵԼ Գրուդ» ՓԲԸ-ի անունով «GRANDOS» բառային ադրանքային նշանը «սուրճ» ադրանքի նկասմամբ 2003թ.-ից հանրահայտ է ճանաչվել:

դ) ՀՀ արտնագրային վարչության 13.10.2000թ. թիվ 58 հրամանով հաստատված «Ադրանքային նշանը Հայաստանի Հանրադեսությունում հանրահայտ ճանաչելու մասին» կարգի 2.2 կեսի ե/ ենթակեսի դահանջի համաձայն՝ Հայարտնագրի կողմից ադրանքային նշանի հանրահայտության վերաբերյալ սղառողների հարցում կասարելու վերաբերյալ հրահանգներ մշակված և հրադարակված չեն:

**4. Վճռաքել դասարանի դասճառաբանությունները և եգրահանգումը.**

Քննելով վճռաքել բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաքել դասարանը գտնում է, որ բողոքի հիմքերն առկա են հեսկյալ դասճառաբանությամբ:

ա/ Դասարանը սխալ է մեկնաբանել «Ադրանքային և սղասարկման նշանների, ադրանքների ծագման շեղանունների մասին» ՀՀ օրենքի 21.1-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «Իրավական ակերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի առաջին մասով սահմանված կանոնի ուժով («իրավական ակեր մեկնաբանվում է դրանում դարունակվող բառերի և արտահայտությունների սառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի դահանջները») «դիմումում նշված թվականի դրությամբ» արտահայտությունը մեկնաբանելով որդես «սարեսկզբի (թվականի սկզբի) իմաստով՝ դրա եղանակից դուրս չթողնելու համար որևէ օր, որն օբյեկտիվորեն ներառված է «թվական» հասկացության ծավալում, և որի վրա հասնելուն դես օբյեկտիվորեն կիրառելի է դառնում «թվականի դրությամբ» արտահայտությունը»: Վճռաքել դասարանը գտնում է, որ «Ադրանքային և սղասարկման

---

նճաններ, աղբյուրների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 21.1-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով «թվականի դրությամբ» արտահայտությունը ղեկ է մեկնաբանել որդես սվյալ թվականի ընթացքում ընկած որևէ ժամանակահատված, և այն կարող է կոնկրետացվել յուրաքանչյուր անհատական դեպքում: «Թվական» հասկացությունը լեզվաբանական առումով մեկնաբանելիս դարձ է դառնում, որ այն ունի մի քանի իմաստներ, այն է՝ «սարի», «սարեթիվ», «թվանճան, որով արտահայտվում է ժամանակը» և այլն: Իսկ «Աղբյուրային և սղասարկման նճանների, աղբյուրների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 21.1-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով «թվականի դրությամբ» հասկացությունը մեկնաբանելիս ղեկ է նկատի ունենալ, որ որևէ թվականի դրությամբ որևէ իրադարձություն կարող է տեղի ունենալ կամ կատարվել սվյալ տարվա (տարեթվի, թվականի) մեջ օբյեկտիվորեն ներառված ցանկացած օրվա դրությամբ: Հետևաբար աղբյուրային նճանների հանրահայտության ուղղված գործողությունների իրականացման ժամանակաշրջանը և այն ժամանակահատվածը, որում արդեն նճանը ձեռք է բերել հանրահայտություն, կարող են տեղի ունենալ մեկ տարվա ընթացքում (նույն թվականին), և դա չի բացառում օրենքով սահմանված հնարավորությունը՝ արդեն իսկ օբյեկտիվորեն հանրահայտություն ստացած (հանրահայտ դարձած) աղբյուրային նճանի ճանաչումը օրենքով սահմանված ընթացակարգով:

բ/ Դատարանը կիրառել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները, որոնք չղեկ է կիրառել:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասը կարգավորում է այն իրավիճակը, երբ իրավական ակտում նախատեսված նորմի դատարանը կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա կատարման ուղղակիորեն դայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ:

Սակայն, «Աղբյուրային և սղասարկման նճանների, աղբյուրների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 21.1-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված նորմի դատարանը «Աղբյուրային և սղասարկման նճանների, աղբյուրների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ իրավական ակտի ընդունմամբ դայմանավորված չէ, հետևաբար «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները սվյալ դեպքում կիրառելի չեն:

գ/ Դատարանը սխալ է մեկնաբանել «Աղբյուրային և սղասարկման նճանների, աղբյուրների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 21.1-րդ հոդվածի 2-րդ մասը՝ եզրակացնելով, որ աղբյուրային նճանի հանրաճանաչությունը բնորոշվում է ոչ թե «բնակչության որոշակի մասին» լավ հայտնի լինելու, այլ «ՀՀ տարածքում լավ հայտնի լինելու հանգամանքով»:

«Աղբյուրային և սղասարկման նճանների, աղբյուրների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 21.1-րդ հոդվածի 2-րդ մասը չի սահմանում ՀՀ ողջ տարածքում աղբյուրային նճանի՝ որդես սվյալ անձի կողմից արտադրող նճան աղբյուրների տարբերակման (անհատականացման) միջոցի հանրահայտության ճանաչում, այլ մասնագնում է միայն սղատողների համադաստիսան շրջանակի մոտ հանրահայտ լինելու հանգամանք: Սա նճանակում է, որ «սղատողների համադաստիսան շրջանակը» կարող է որոշվել մի շարք տեսակային հատկանիշներով, այդ թվում նաև՝ բնակչության տարածքի հատկանիշով: Իսկ «սղատողների համադաստիսան շրջանակ» հասկացությունը չի

կարող նույնացվել «բոլոր սոցառոյներ» հասկացության հետ, հետևաբար սնտեսական դասարանի այն եզրակացությունը, թե ադրանֆային նշանի հանրաձանաչությունը չորս բնակավայրերում (անկախ դրանց բնակեցման խտությունից) չի կարող նշանակել ՀՀ սարածֆում լավ հայտնի լինելու ադացույց, հիմնագուրկ է:

Ավելին, «սոցառոյների համադասասխսան երջանակ» հասկացության մեկնաբանությունը սրված է ՀՀ Արսնագրային վարչության 13.10.2000թ.-ի թիվ 58 հրամանի 1.1 կետում, ըստ որի՝ «սոցառոյների համադասասխսան երջանակներ» հասկացությունն իր մեջ ներառում է ադրանֆների և (կամ) ծառայությունների հնարավոր սոցառոյներին, ադրանֆների և (կամ) ծառայությունների սարածման ուղիների ադահովմանը մասնակցող անձանց, ադրանֆներով և (կամ) ծառայություններով (որոնց նկասմամբ օգսագործվում է ադրանֆային նշանը) գրադվող գործարար երջանակներին:

Միածամանակ հարկ է նշել, որ սույն հիմնի առկայությունը որևէ ձևով չի կարող ազդել սույն գործով ՎՃռաքեկ դասարանի եզրահանգման վրա, քանի որ ՀՀ սնտեսական դասարանն իր այս փաստարկը չի դրել իր վճռի հիմնում, այլ միայն եզրակացություններ է արել հիդդոթեիկ դասոդությունների արդյունքում:

Արձանագրելով վճռաքեկ բողոքի հիմնի առկայությունը՝ միածամանակ ՎՃռաքեկ դասարանը գնում է, որ բողոքը ենթակա է մերծման, իսկ դասական ակսը դետս է թողնել օրինական ուծի մեջ, քանի որ վճռաքեկ բողոքի հիշասակված հիմները բավարար չեն ըստ էության ճիշտ դասական ակսի բեկանման համար:

ՎՃռաքեկ դասարանը գործի քննությամբ դարգեց, որ սույն քադաքցիական գործով սնտեսական դասարանի կողմից հետագոսվել, գնահատվել և վճռի հիմնում են դրվել բազմաթիվ այլ ադացույցներ, որոնք բավարար հիմք են հանդիսացել դիմումը բավարարելու վերաբերյալ վճիռ կայացնելու համար: Մասնավորադես դասասխսանողը որդես վիճարկվող որոշման կայացմանը հանգեցնող սեղեկությունների ադբյուր հիշասակել և դասարանին է ներկայացրել նաև մի շարք փաստաթղթեր, այն է՝ հումնի ձեռք բերման, ադրանֆային նշանի սդագրության, ինչդես նաև փաթեթների, սուփերի և սարաների դասրասման վերաբերյալ դայմանագրեր և հաշիվ-ադրանֆագրեր, հարկային հաշիվություններ՝ սկսած 2003 թվականից, լիցենզիայի փոփոխության հետ կադված դասական փաստաթղթեր, համադասասխսանության մասին հայտարարադիր, արսադրանմուծի փորձարկման արձանագրություններ, սուոզման և նմուշանման ակսեր, սեղեկանֆներ, որոնք դասարանի կողմից կասարված օբյեկսիվ և բազմակողմանի հետագոսության արդյունքում գնահատվել են, և դրանց առկայությունը բավարար է եղել դասարանի կողմից դիմումը բավարարելու մասին վճիռ կայացնելու համար:

Այսդիսով, ՎՃռաքեկ դասարանը գնում է, որ բողոք բերող անձի այն դիդումը, թե «Ադրանֆային և սոցասարկման նշանների, ադրանֆների ծագման սեղանունների մասին» ՀՀ օրեննի 21.1-րդ հողվածի սխալ մեկնաբանման արդյունքում դասարանը թույլ է սվել նյութական և դասավարական իրավուննի նորմերի խախտում, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծմանը, անհիմն է, քանի որ թեև դասարանը թույլ է սվել նյութական իրավուննի խախտում, սակայն այն չի կարող ըստ էության ճիշտ դասական ակսը բեկանելու հիմն հանդիսանալ, քանի որ այն վճռի կայացման հարցում դասարանի դիրքորոշման ձևավորման հարցում էական նշանակություն չի ունեցել:

Ելնելով վերոգրյալից և դեկավարվելով ՀՀ քադաքցիական դասավարության օրենսգրքի 236-239-րդ հողվածներով՝ ՎՃռաքեկ դասարանը

---

---

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԱՐՄԵԼ Գրուդ» ՓԲԸ-ի վճռաբեկ բողոքը մերժել:
2. ՀՀ սնտեսական դատարանի 06.07.2006թ վճիռը թողնել օրինական ուժի մեջ:
3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրատարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՔԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաբնակչության նախարարի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 06-1366/2006թ.  
Նախագահող դատավոր՝ Ա.Խառատյան  
Դատավորներ՝ Տ.Սահակյան  
Ա.Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ 3-1782(ՎԳ)  
2006թ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՉՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2006թ. սեպտեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննարկելով ՀՀ ռազմականության անձնագրային և վիզաների վարչության ղեկավար Ա. Զաքարյանի վճռաբեկ բողոքի ըստ դիմումի Հայկ Գևորգյանի ընդդեմ ՀՀ ռազմականության անձնագրային և վիզաների վարչության դատարանային անձի աղյուսակի գործողությունները վիճարկելու մասին ՀՀ քաղաքացիական գործերով վերաբնակչության դատարանի 06.05.2006թ կայացրած վճիռի դեմ,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դատարանական նախադասությունը.**

Դիմելով Կենտրոն և Նոր-Մարաշ համայնքների առաջին ասյանի դատարան՝ Հայկ Գևորգյանը վիճարկել է ՀՀ ռազմականության անձնագրային և վիզաների վարչության դատարանային անձի աղյուսակի գործողությունները և դատարանից է անվավեր /չեղյալ/ ճանաչել իր անվամբ սրված ՀՀ քաղաքացու անձնագիրը:

ՀՀ Կենտրոն և Նոր-Մարաշ համայնքների առաջին ասյանի դատարանի 12.09.2005թ. վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաբնակչության դատարանի 02.11.2005թ. վճռով դիմումը կրկին մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և սնտեսական գործերով դատարանի



---

10.02.2006թ. որոշմամբ ՀՀ վերաբնիչ դասարանի 02.11.2005թ. վճիռը բեկանվել է, և գործը ուղարկվել նույն դասարան՝ այլ կազմով նոր ֆննության:

ՀՀ ֆաղաֆագիական գործերով վերաբնիչ դասարանի 06.05.2006թ. վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վճռաբեկ դասարանի ֆաղաֆագիական և սնեսասկան գործերով ղալաշի 30.06.2006թ. որոշմամբ ՀՀ ֆաղաֆագիական գործերով վերաբնիչ դասարանի 06.05.2006թ. վճիռը թողնվել է անփոփոխ, իսկ բողոքը՝ առանց բավարարման:

Սույն գործով այլ հիմներով վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ ոսիկանության անձնագրային և վիզաների վարչության ղեկ Ա. Չաֆարյանը:

Դիմումասու Հ.Գևորգյանը վճռաբեկ բողոքին ներկայացրել է ղասասխան:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմները, փաստարկները և ղաահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը ֆննվում է հեսկյալ հիմների սահմաններում ներհիբեյալ հիմնավորումներով՝

1) Դասարանը սույն վեճի նկասմամբ կիրառել է «Քաղաֆագիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հողվաճի երկրորդ մասը, որը չղեսֆ է կիրառել:

Ըստ բողոք բերաճ անձի՝ «Քաղաֆագիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հողվաճի երկրորդ մասը ճազաճ վեճի նկասմամբ կիրառելի չէ, ֆանի որ այն վերաբերում է մինչև 14 սարեկան երեխայի կողմից ֆաղաֆագիություն ձեռք բերելու այն դեղիին, երբ երեխայի ճնողներից մեկը դառնում է ՀՀ ֆաղաֆագի, իսկ մյուսը՝ ոչ:

2) Դասարանը չի կիրառել «Քաղաֆագիության մասին» ՀՀ օրենքի 10-րդ, 11-րդ և 17-րդ հողվաճները:

ՀԽՍՀ նախկին ֆաղաֆագիները, սյալ դեղիում՝ Հ.Գևորգյանի հայրը, «Քաղաֆագիության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հողվաճի ուճով ձեռք է բերել ՀՀ ֆաղաֆագիություն, ինչի արղյունֆում ֆաղաֆագիություն է ձեռք բերել նաև Հ.Գևորգյանը: Դասարանը ղեսֆ է դեկվարվել օրենքի 11-րդ հողվաճով, ֆանի որ Հ.Գևորգյանի ճննղյան ղաահին նրա ճնողները հանղիսացել են ՀՀ ֆաղաֆագիներ: Մինչև 14 սարեկան երեխայի ճնողների, սյալ դեղիում՝ ճնողի, ֆաղաֆագիությունը կորցնելու դեղիում երեխան չի կորցնում ՀՀ ֆաղաֆագիությունը, եթե նա ձեռք չի բերում այլ ղեսության ֆաղաֆագիություն:

Վճռաբեկ բողոք բերաճ անձը վերը նեվաճ հիմներով ինղրել է բեկանել ՀՀ ֆաղաֆագիական գործերով վերաբնիչ դասարանի 06.05.2006թ. վճիռն ամբողղությամբ և գորճն ուղարկել նույն դասարան՝ այլ կազմով նոր ֆննության:

## **3.Վճռաբեկ բողոքի ֆննության համար նեանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի ֆննության համար էական նեանակություն ունեն վերաբնիչ դասարանի վճռով հասսասվաճ հեսկյալ փաստերը՝

1) Հ. Գևորգյանը ճնվել է 03 հունվարի 1985թ. Երևան ֆաղաֆում, ազգությանբ հայ է:

2) Հ. Գևորգյանի ճնողները ազգությանբ հայ են, նրա ճննղյան ղաահին եղել են ՀԽՍՀ ֆաղաֆագիներ:

3) Հ. Գևորգյանի մայրը՝ Հայկուե ղասվականի Գևորգյանը, Խորհրղային եղանի դասարանի 1991թ. սեղսենբերի 4-ի վճռով գրկվաճ է նրա նկասմամբ ճնողական իրավունֆներից:

4) Հ. Գևորգյանը 03.02.2001թ. ներկայացրել է դիմում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությանը անձնագիր ստանալու համար:

5) ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից 31.01.2001թ. Հ. Գևորգյանին սրվել է ՀՀ ֆաղաֆացու անձնագիր:

**4. Վճռաբեկ դատարանի դատառաքանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի երկրորդ մասը կիրառելի չէ սույն վեճի նկատմամբ, քանի որ այն վերաբերում է երեխայի ֆաղաֆացիություն ձեռք բերելու դեղմերին, երբ նրա ծնողները (ծնողը) նոր են ձեռք բերում ՀՀ ֆաղաֆացիություն: Նշված գործով Հայկ Գևորգյանը ծնվել է 03.01.1985թ., և այդ ժամանակ նրա ծնողներն արդեն իսկ եղել են ՀԽՍՀ ֆաղաֆացիներ:

Այսդիտով, դատարանը «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածը կիրառելիս թույլ է սվել ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածով նախատեսված նյութական իրավունքի նորմի սխալ կիրառում:

*2) բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ վերաբնիչ դատարանը չի կիրառել «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի լիարժեք, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության ֆաղաֆացիներ են ճանաչվում Հայաստանի Հանրապետությունում մշտադեպ ապրող նախնիներին ՀԽՍՀ ֆաղաֆացիները, ովքեր մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելը ձեռք չեն բերել այլ լիարժեքության ֆաղաֆացիություն կամ հրաժարվել են դրանից՝ նույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամիսը ընթացքում:

Դիմումատու Հայկ Գևորգյանի հայրը՝ Ռաֆիկ Գևորգյանը, հանդիսանալով ՀԽՍՀ ֆաղաֆացի և ձեռք չբերելով այլ լիարժեքության ֆաղաֆացիություն, «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի ուժով ձեռք է բերել Հայաստանի Հանրապետության ֆաղաֆացիություն:

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆաղաֆացիություն ձեռք բերած ծնողների մինչև 14 ամսական երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության ֆաղաֆացիություն: Քանի որ դիմումատուի հայրը մինչև դիմումատուի 14 ամսական դառնալը օրենքի ուժով դարձել է Հայաստանի Հանրապետության ֆաղաֆացի, հետևաբար Հայաստանի Հանրապետության ֆաղաֆացիություն է ձեռք բերել նաև դիմումատու Հայկ Գևորգյանը:

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆաղաֆացիությունը կորցրած ծնողների մինչև 14 ամսական երեխան կորցնում է Հայաստանի Հանրապետության ֆաղաֆացիությունը, եթե նա ձեռք է բերում այլ լիարժեքության ֆաղաֆացիություն: Տվյալ դեղմում Հայկ Գևորգյանը ձեռք չի բերել այլ լիարժեքության ֆաղաֆացիություն, հետևաբար չի կարող կորցված համարվել նրա ՀՀ ֆաղաֆացիությունը, և վերջինս շարունակում է լիարժեքում Հայաստանի Հանրապետության ֆաղաֆացիությունը:

Մինչև Հ.Գևորգյանի 14 ամսական դառնալը նրա հոր՝ Հայաստանի

---

Հանրադատության ֆաղաֆագիությունը կորցնելը չի հանգեցնում Հ.Գևորգյանի ֆաղաֆագիությունը կորցնելուն, քանի որ նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ եթե ծնողներից մեկը կորցրել է Հայաստանի Հանրադատության ֆաղաֆագիությունը, իսկ մյուսը Հայաստանի Հանրադատության ֆաղաֆագի է, նրանց մինչև 14 ամսական երեխան կորցնում է Հայաստանի Հանրադատության ֆաղաֆագիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է Հայաստանի Հանրադատությունից դուրս, և առկա է Հայաստանի Հանրադատության ֆաղաֆագի հանդիսացող ծնողի համաձայնությունը: Նշված դեպքերից որևէ մեկը սույն գործով առկա չէ:

Ինչ վերաբերում է «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը չկիրառելու մասին վճռաբեկ բողոքի դասճառաբանություններին, առաջ վճռաբեկ դասարանը գտնում է, որ բողոքն այդ մասով հիմնավոր չէ, քանի որ նշված հոդվածը կարգավորում է ֆաղաֆագիություն ձեռք բերելու հետ կապված այն իրավահարաբերությունները, որոնք առաջանում են երեխայի ծննդյան դեպքում: Նշված հոդվածը սարածվում է «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա և կիրառելի է այն դեպքերում, երբ երեխայի ծնվելու դեպքում նրա ծնողները հանդիսանում են Հայաստանի Հանրադատության ֆաղաֆագիներ:

Այսպիսով, սույն բողոքի հիմքերի առկայությունը, ՀՀ ֆաղաֆագիական դասավարտության օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն, ՀՀ վերաքննիչ դասարանի վճիռն ամբողջությամբ բեկանելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆագիական դասավարտության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ վճռաբեկ դասարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել՝ բեկանել ՀՀ ֆաղաֆագիական գործերով վերաքննիչ դասարանի 06.05.2006թ. վճիռն ամբողջությամբ և գործն ուղարկել նույն դասարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարսակման դեպքից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
ֆաղափացիական գործերով  
վերաքննիչ դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 06-2496  
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան

Քաղաքացիական գործ թիվ 3-2027 (ՎԴ)  
2006

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղափացիական դալասը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՁՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2006թ. սեպտեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով հայցվոր Հովհաննես Ազիզբեկյանի, դատախազանոդներ Արայիկ Կոստանդյանի, Խաչատուր Խաչատրյանի և Վարդգես Վարդերեսյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքները ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.07.2006թ. թիվ 06-2496 վճռի դեմ՝ ըստ Հովհաննես Ազիզբեկյանի հայցի ընդդեմ «Ավստոմասիկա ԳՀԻ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) բաժնետերեր Վ.Վարդերեսյանի և Նյուաների, երրորդ անձ Ընկերության, Վանաձորի նոսարական սարածփի նոսար Ս. Վերանյանի՝ վերջինիս կողմից վավերացված գործարքներն անվավեր ճանաչելու, ՀՀ ֆաղափացիական օրենսգրքի 195-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն գնորդի՝ իր իրավունքն իրեն փոխանցելու դատախազի մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատարական նախադասնությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորը խնդրել է կողմերի միջև կնքված նվիրատվության և առուվաճառքի դայմանագրերը ճանաչել անվավեր և իրեն վերադադել իր՝ որդես բաժնետիրոջ, դրանք գնելու նախադասնության իրավունքը՝ իրեն փոխանցելով գնորդի իրավունքներն ու դատարկանությունները:

Լռուու մարզի առաջին այսյանի դատարանի 18.05.2006թ. վճռով հայցը մերժվել է:  
ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.07.2006թ. վճռով հայցը

---

բավարարվել է մասնակի՝ դասասխանողներ Խաչասուր Խաչասրյանի և Արայիկ Կոստանդյանի միջև 2005թ. դեկտեմբերի 5-ին կնքված և նոտարական կարգով վավերացված 99582 հաս 45.86% Ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի դայմանագրով, դայմանագրի նույն դայմաններով գնորդի իրավունքները և դարձականությունները փոխանցվել է հայցվոր Հովհաննես Ազիզբեկյանին:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել դասասխանողներ Արայիկ Կոստանդյանը, Խաչասուր Խաչասրյանը և Վարդգես Վարդերեսյանը:

Բողոք բերած դասասխանողները խնդրել են բեկանել (ուժը կորցրած ճանաչել) ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբնիչ դատարանի 19.07.2006թ. վճիռը և օրինական ուժ սալ Լոռու մարզի առաջին ասյանի դատարանի 18.05.2006թ. թիվ 2/1007-2006թ. վճիռն:

Սույն գործով բողոք է ներկայացրել նաև հայցվոր Հովհաննես Ազիզբեկյանը:

Բողոք բերած հայցվորը խնդրել է ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբնիչ դատարանի 19.07.2006թ. վճիռը բեկանել մասնակի՝ նվիրատվության դայմանագրին վերաբերող մասով:

Վճռաբեկ բողոքներին դասասխաններ չեն ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դաժանությունը.**

Սույն վճռաբեկ բողոքը բնավում է հետևյալ հիմքերի սահմաններում ներհանրապես հիմնավորումներով.

*դաս ասխանողներ Արայիկ Կոստանդյանի, Խաչասուր Խաչասրյանի և Վարդգես Վարդերեսյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքների՝*

1) ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբնիչ դատարանը խախտել է (սխալ է կիրառել) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ և 48-րդ հոդվածները:

Նշված հոդվածների նորմերը վերաբերում են ոչ թե ընկերության բաժնետերերի կողմից իրենց բաժնետոմսերը վաճառելուն, այլ ընկերության կողմից դրանք սեղաբաժնետիր: Բաժնետոմսերի սեղաբաժնետիր կարող է իրականացնել բացառապես «բաց» կամ «փակ» բաժնետիրական ընկերությունը, այլ ոչ թե ընկերության բաժնետեր: «Տեղաբաժնետիր» իրավաբանական նշանակություն ունեցող հասկացությունը (բաժնետիրական իրավահարաբերություններում) վիճարկվող գործարքի հետ որևէ ընդհանրություն չունի:

2) ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբնիչ դատարանը վճիռ կայացնելիս կիրառել է նաև ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին կետը, որը սույն գործով կիրառման ենթակա չէ:

Դատարանի այն եզրահանգումը, թե բաժնետոմսերը որդես բաժնային սեփականություն հանդիսացող գույք օտարվելու արդյունքում դրա բաժնային սեփականատերը զրկվել է գույքի սնորհման իրավունքից, զուրկ է իրավաբանական սրամաբանությունից, քանի որ սվյալ դեղում իրավական նորմը սահմանում է բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը սնորհնելու և դրա բոլոր մասնակիցների համաձայնության իմաստը:

3) Դատարանը սխալ է կիրառել ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 195-րդ հոդվածի 3-րդ կետը:

ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 195-րդ հոդվածի 3-րդ կետը կրկին վերաբերում է բաժնային սեփականություն հանդիսացող գույքի վաճառքին և դա գնելու նախադասվության իրավունքից չօգտված անձի իրավունքներին և ծագած իրավահարաբերությունների նկատմամբ նույնդես կիրառելի չէ: Բաժնետոմսը ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 189-րդ հոդվածի ուժով չի համարվում բաժնային սեփականության գույք, բաժնետոմսը համարվում է գույքային իրավունքը հավաստող ներդրումային արժեթուղթ:

4) Դատարանը խախտել է ՀՀ ֆաղաֆաղիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 2.1-րդ մասը:

Դատարանի կողմից կիրառված նորմերը չեն կարող հիմք հանդիսանալ գործարքի անվավերության համար, հետևաբար դատարանը, սլյալ գործարքն անվավեր համարելով, կայացրել է ըստ էության անհիմն վճիռ: Դատարանը վճռով չի նշել գործարքի անվավերության հետևանքները, ինչը ղեկ է անել, քանի որ համաձայն ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 305-րդ հոդվածի՝ օրենքին հակասող գործարքն անվավեր է: Ըստ էության դատարանն անվավեր է ճանաչել գործարքները, սակայն անվավերության հետևանքներին չի անդրադարձել:

*Ըստ Հովհաննես Ազիզբեկյանի բողոքի՝*

1) Դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը:

Սեփականության իրավունքի իրականացումը չղեկ է վնաս դատառի Երջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և ղեկության իրավունքներն ու օրինական Եահերը: Նշված խախտման որևէ հիմնավորում բողոք բերող անձը չի նշել:

2) Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 192-րդ հոդվածի ղահանջը:

Բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի բաժինը վաճառել, նվիրել, կտակել, գրավ դնել կամ այլ կերպ սնօրինել՝ դրա հատուցելի օտարման դեղում ղահողանելով ՀՀ ֆաղաֆաղիական դատավարության օրենսգրքի 195-րդ հոդվածի կանոնները:

3) Դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 195-րդ հոդվածը:

4) ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբնիչ դատարանը «անհետել է» (հավանաբար բողոք բերող անձը ի նկատի ունի չկիրառելը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ և 48-րդ հոդվածները:

Մինչև բաժնետոմսերի նվիրատվության գործարք կատարելը ղեկ էր նշանակել բաժնետոմսերի սեփականատերերի ժողով, որը չի կատարել, հետևաբար խախտել են նշված հոդվածների ղահանջները:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) հայցվոր Հ. Ազիզբեկյանը, ղատասխանողներ Խաչատուր Խաչատրյանը, Կլարա և Միմակ Դաղեսյանները, Վարդգես Վարդերեսյանը հանդիսանում են Ընկերության

---

բաժնետերեր:

2) Ընկերության բաժնետեր Վարդգես Վարդերեսյանն իրեն ղայականող 10183 հաս բաժնետոմսերը 02.12.2005թ. բաժնետոմսերի նվիրատվության ղայմանագրի հիման վրա նվիրել է ղայաստիսանող Արայիկ Կոստանդյանին: Իրենց բաժնետոմսերը Ա.Կոստանդյանին են նվիրել նաև Կարաև և Սիմակ Դագեսյանները:

3) Ընկերության բաժնետեր Խաչատուր Խաչատրյանը 05.12.2005թ. իրեն ղայականող 99582 հաս բաժնետոմսերը առուվաճառքի ղայմանագրով վաճառել է Ա. Կոստանդյանին:

#### **4. Վճարել ղայսարանի ղայաճառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճարել բողոքները՝ նշված հիմքերի սահմաններում Վճարել ղայսարանը գտնում է, որ՝

*1) պատաստիսանողների բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հեևկյալ պատճառաբանությամբ.*

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ և 48-րդ հողվածները երաճխիբային նորմեր են սահմանում ընկերության բաժնետերերի համար ընկերության կողմից բաժնետոմսեր բողարկելու դեղում: Վճարել ղայսարանը, ուսումնասիրելով սվյալ գործում առկա փաստերը, գտնում է, որ սեղի է ունեցել ոչ թե բաժնետոմսերի բողարկում, այլ բաժնետիրոջ կողմից սեփականության իրավունքով իրեն ղայականող բաժնետոմսերի օտարում: Իրավաբանական հեևևանքների առումով այս երկու փաստերը միմյանցից սարքերվում են նրանով, որ բաժնետոմսերի բողարկումը հանգեցնում է ընկերության կանոնադրական կաղիսալի մեծացմանը, իսկ բաժնետոմսի օտարումը հանգեցնում է ընկերության մասնակիցների կազմի և/կամ մասնակիցների կողմից սնօրինվող բաժնետոմսերի բանակի փոփոխությանը և ոչ մի կերղ չի հանգեցնում կանոնադրական կաղիսալի չափի փոփոխման: Հեևևաբար, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ և 48-րդ հողվածի կանոնները սույն վեճի նկատմամբ կիրառելի չեն:

*2) պատաստիսանողների բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է հեևկյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ բաղաբացիական օրենսգրքի 192-րդ հողվածի կանոնները կիրառվում են բաժնային սեփականության հարաբերությունների նկատմամբ: Իսկ բաժնային սեփականությունը ենթադրում է գույքի նկատմամբ երկու կամ ավելի անձանց սեփականություն (ընդհանուր սեփականություն): Սույն գործով ընկերության բաժնետոմսերը (որոնցով կատարված գործարքները վիճարկվում են) սեփականության իրավունքով ղայականում են ընկերության համաղատաստիսան բաժնետիրոջը, և դրանց նկատմամբ սեփականության իրավունքը չի ղայականում մեկից ավելի սուբյեկտների (մասնակիցների): Հեևևաբար, ծագած իրավահարաբերությունների նկատմամբ ՀՀ բաղաբացիական օրենսգրքի 192-րդ հողվածը կիրառելի չէ:

*3) պատաստիսանողների բողոքն երրորդ հիմքով հիմնավոր է հեևկյալ պատճառաբանությամբ.*

Վճարել ղայսարանը գտնում է, որ սույն գործում բացակայում է ընդհանուր սեփականության իրավահարաբերություններին վերաբերող վեճ, ինչը հիմնավորվում է բողոքի երկրորդ հիմքի կաղակցությամբ սված ղայաճառաբանություններով: Հեևևաբար, սույն գործով ՀՀ բաղաբացիական օրենսգրքի 195-րդ հողվածի երկրորդ մասը նույնղես

կիրառելի չէ:

4) *պատասխանողների բողոքը չորրորդ հիմնով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաքննիչ դատարանը, կիրառելով ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 12-րդ գլխի նորմերը, եկել է այն եզրակացության, որ ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքի մասն օտարելու դեղումն թույլ են տրվել մնացած համատեփականատերերի իրավունքների խախտումներ, որոնց վերականգնումը հնարավոր է դարձել ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 195-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով: Նշված հոդվածի 3-րդ մասի սրամաբանությամբ, ոչ թե սահմանված կարգի խախտմամբ կնքված գործարքը ղեկ է անվավեր ճանաչել, այլ ուղղակի ղեկ է այդ գործարքով գնորդի համար նախատեսված իրավունքներն ու դարսականությունները փոխանցել ընդհանուր սեփականության համադասասխան սեփականատիրոջը: Այսինքն՝ ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաքննիչ դատարանը 05.12.2005թ. կնքված գործարքն անվավեր չի ճանաչել, ուստի ՀՀ ֆաղաֆաղիական դատարարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 2.1 մասի կիրառման անհրաժեշտություն չի առաջացել:

**Հայցվոր Հովհաննես Ազիզբեկյանի վճռաբեկ բողոքի մասով.**

1) *Հայցվորի բողոքն առաջին հիմնով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի խախտումը հիմնավորող որևէ փաստեր կայցվորը չի բերել:

2) *Հայցվորի բողոքն երկրորդ և երրորդ հիմնով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

Սույն վեճի նկատմամբ ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 192-րդ և 195-րդ հոդվածի կանոնները կիրառելի չեն, ինչը հիմնավորվում է դատասխանողների բողոքի երկրորդ հիմնի կադակցությամբ տրված դատճառաբանություններով:

4) *Հայցվորի բողոքը չորրորդ հիմնով հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.*

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ և 48-րդ հոդվածի կանոնների՝ սույն վեճի նկատմամբ կիրառելի չլինելու մասին դատճառաբանությունները տրված են դատասխանողների վճռաբեկ բողոքի առաջին հիմնի վերաբերյալ եզրակացություններում:

Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում դարունակվող բառերի և արտահայտությունների սառաջի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի դահանջները: ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ փակ բաժնետիրական ընկերության բաժնետերն ունի այդ ընկերության այլ բաժնետերերի կողմից **վաճառվող** բաժնետոմսերի ձեռքբերման նախադասվության իրավունք: Տվյալ դեղումն առկա է նվիրավության գործարք, որի նկատմամբ ՀՀ ֆաղաֆաղիական օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով բաժնետիրոջ նախադասվության իրավունքը սահմանող համադասասխան դրույթը կիրառելի չէ:

Այսպիսով, դատասխանողների բողոքում նշված հիմների առկայությունը, ՀՀ



---

ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն, ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաֆննիչ դասարանի վճիռը մասնակիորեն բեկանելու հիմք են հանդիսանում:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դասարանը գտնում է, որ սվյալ դեղմում անհրաժեշտ է կիրառել ՀՀ ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դասարանի դասական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դասարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ: «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դաշտանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաֆանջյուր ու ունի ողջամիտ ժամկետում իր գործի ֆննության իրավունք: Մույն ֆաղաֆացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դասարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում ֆննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դասաֆննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վնաս են դարձնակում նշված իրավունքի խախտման Տեսանկյունից: Տվյալ դեղմում Վճռաբեկ դասարանի կողմից ստորադաս դասարանի դասական ակտը փոփոխելը բխում է արդարադասության արդյունավետության ռահերից:

*Դասական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դասարանը հիմք է ընդունում հետևյալ պատճառաբանությունները:*

Փակ բաժնետիրական ընկերությունների բաժնետերերի կողմից իրենց բաժնետոմսերը օտարելու հետ կաղված հարաբերությունները կարգավորվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի երրորդ մասով: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախատասվության իրավունքի իրականացման կարգը եւ ժամկետները սահմանվում են ընկերության կանոնադրությամբ, իսկ նախատասվության իրավունքի ժամկետը չի կարող բաժնետոմսերի վաճառքի առաջարկման դահից 30 օրից դակաս եւ 60 օրից ավելի լինել: Տվյալ դեղմում ընկերության կանոնադրության 6.2-րդ կետում բառացիորեն վերադարձված են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված դրույթները, և ամրագրված է միայն բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի ձեռք բերման նախատասվության իրավունքի իրականացման ժամկետը /գ.թ. 47/: Ընկերության կանոնադրության մեջ բաժնետերերի նախատասվության իրավունքի իրականացման կարգի բացակայության դայմաններում բաժնետոմս վաճառող բաժնետերը չունե օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված՝ բաժնետոմսերի վաճառքի մասին ընկերության մնացած բոլոր բաժնետերերին Տեղեկացնելու դարսականություն:

Ընկերության կանոնադրության մեջ բաժնետերերի նախատասվության իրավունքի իրականացման կարգի բացակայության դայմաններում բաժնետոմսերի՝ ընկերության որևէ բաժնետիրոջը վաճառելը չի կարող համարվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի դահանջների խախտում, ֆանի որ փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի վաճառքի դեղմում ընկերության մնացած բաժնետերերը օտարվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախատասվության իրավունք ունեն ընկերության կամ երրորդ անձի նկասմամբ, այլ ոչ թե միմյանց նկասմամբ:

**ՎՃՈՎՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

---

Այսպիսով, վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվոր Հովհաննես Ազիզբեկյանի վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, իսկ դատաստիսանողներ Արայիկ Կոստանդյանի, Խաչատուր Խաչատրյանի և Վարդգես Վարդերեսյանի վճռաբեկ բողոքը՝ բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Հայցվոր Հովհաննես Ազիզբեկյանի վճռաբեկ բողոքը մերժել:
2. Պատասխանողներ Արայիկ Կոստանդյանի, Խաչատուր Խաչատրյանի և Վարդգես Վարդերեսյանի վճռաբեկ բողոքը բավարարել. ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաքննիչ դատարանի 19.07.2006թ. թիվ 06-2496 վճռի՝ դատաստիսանողներ Խաչատուր Խաչատրյանի և Արայիկ Կոստանդյանի միջև 2005թ. դեկտեմբերի 5-ին կնքված և նոտարական կարգով վավերացված 99582 հաս 45,86 տկոս «Ավստոմասիկա ՉՀԻ» ՓԲ ընկերության բաժնետոմսերի առուվաճառքի դրամացուցիկի դրամացուցիկի նույն դրամացուցիկով գնորդի իրավունքները և դատարանական գործը հայցվոր Հովհաննես Ազիզբեկյանի փոխանցելու մասը բեկանել և այդ մասով դատարանի ակտը փոփոխել՝ *Հովհաննես Ազիզբեկյանի հայցը մերժել:*
3. Վճիռը մնացած մասով թողնել անփոփոխ:
4. Հովհաննես Ազիզբեկյանից հօգուտ Արայիկ Կոստանդյանի բռնագանձել 20000 ՀՀ դրամ՝ որդես վճռաբեկ բողոք բերելու համար վճարված դեսական տուրքի գումար:
5. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրատարակման դրանից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usruaqrupjուն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usruaqrupjուններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԳԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
Տնտեսական դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ S-1067  
Նախագահող դատավոր՝ Ե.ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Քաղաքացիական գործ թիվ 3-1864 (ՏԳ)  
2006

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
մասնակցությամբ դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒԻՋՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ*

2006թ. սեպտեմբերի 28-ին

դռնբաց դատական նիստում, քննելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային  
դատարանի ծառայության վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դատարանի 30.06.2006  
թվականի վճռի դեմ՝ ըստ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային դատարանի  
ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) հայցի ընդդեմ «Տավրիդա» ՍՊ ընկերության  
(այսուհետ՝ Ընկերություն)՝ 38.415.700 ՀՀ դրամ հարկային դարձի գումարը բռնագանձելու  
դատարանի մասին և ըստ ընկերության հակընդդեմ դիմումի՝ 16.06.2005թ. թիվ 1013121  
ակտն անվավեր ճանաչելու դատարանի մասին,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դատարանական նախադասությունը.**

Ծառայությունը, դիմելով ՀՀ տնտեսական դատարան, դատարանից է դատարանից  
բռնագանձել 38.415.700 ՀՀ դրամ հարկային դարձի, ինչպես նաև վճարված  
դատարանի տուրքի գումարները:

Հակընդդեմ դիմումով Ընկերությունը խնդրել է անվավեր ճանաչել բյուջեի հետ  
փոխհարաբերությունների ճշտության ստուգման 16.06.2005թ. թիվ 1013121 ստուգման  
ակտը:

ՀՀ տնտեսական դատարանի 30.06.2006թ. վճռով Ծառայության հայցն ընդդեմ  
Ընկերության բավարարվել է մասնակի՝ ինչպես ՀՀ դատարանի բյուջեի բռնագանձվել է  
197.500 ՀՀ դրամ լիցենզիայի համար սահմանված դատարանի տուրքի գծով սույժի գումարը,

իսկ հայցի մնացած մասը մերժվել է:

Ընկերության հակընդդեմ դիմումը բավարարվել է՝ անվավեր է ճանաչվել ՀՀ կառավարությանն առընթեր հարկային ղեկավարության 16.06.2005թ. թիվ 1013121 սուզման ակտը:

Սույն գործով վճռաբեկ բողոքը ներկայացրել է Ծառայությունը:

Ընկերության կողմից վճռաբեկ բողոքին տրասասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դաշխանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը ֆնսվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներհիշյալ հիմնավորմամբ՝

1) դասարանը չի կիրառել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 25.08.1998 թվականի թիվ 525 որոշմամբ հաստատված «Նյութական և ոչ նյութական ակտիվների, ադրանֆանյութական դաւարների ձեռքբերման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի կազմման» կարգի դաշխանջները, որոնք ղեւս է կիրառել, և կիրառել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ և 23-րդ հոդվածների 1-ին կետերը, որոնք չղեւս է կիրառել:

Դասարանը վճիռ կայացնելիս հիմք է ընդունել այն հանգամանքը, որ ՀՊԾ հետաֆնության բաժինը, կասարելով հետաֆնություն, որևէ խախտում չի արձանագրել, այլ օղերաշիվ հետախուզության վարչության կողմից ներկայացրած նյութերը վերադարձել է հետաֆնության հիմքերի բացակայության դաշխանջով, իսկ փորձաֆնությամբ հաստատվել է, որ այն հաւիվ-ադրանֆագրերը, որոնք հիմք են հանդիսացել սուուողների կողմից ակտիվ դաշաւորությունների առաջադրման համար, կազմվել են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ և 23-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 25.08.1998 թվականի թիվ 525 որոշմամբ հաստատված կարգի դաշխանջներին համադաշասախան: «Էլոսա» և «Գրիդաւ» ՍՊ ընկերությունները գործունեություն չեն իրականացնում, հետևաբար նրանց հետ իրական գործարքներ չեն կասարվել, ուսի «Տաւրիդա» ՍՊ ընկերության կողմից վերը նււված ընկերություններից ձեռք բերված հաւիվ-ադրանֆագրերն անհիմն են և անարժանահաւաս:

Վերողրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը խնդրել է բեկանել ՀՀ սնեստական դասարանի 30.06.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նոր ֆնության:

**3. Վճռաբեկ բողոքի ֆնության համար նւանակություն ունեող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի ֆնության համար էական նւանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՀՀ կառավարությանն առընթեր հարկային ղեկավարության ղեւի 04.04.2005թ. թիվ 1013121 հանձնարարագրի հիման վրա՝ 07.06.2005թ.-ից մինչև 16.06.2005թ. կասարվել է սուուում, որի արդյունֆում 16.06.2005թ. կազմվել է սուուման թիվ 1013121 ակտը (գ.թ. 8, 9-14):

2) Ընկերությունը 2004թ. երկրող, երրող և չորրող եռամայակներում «Էլոսա» և «Գրիդաւ» ՍՊ ընկերություններից կանխիկ վճարումներով ձեռք է բերել համադաշասախանաբար 34.224,9 հազ. ՀՀ դրամի (այդ թիւում 5.704,1 ՀՀ դրամ ԱԱՀ) և 21.802,9 հազ. դրամի (այդ թիւում 3.633,8 հազ. ՀՀ դրամ ԱԱՀ)՝ հումֆ և նյութեր:

---

3) Ծառայության ակտով ընկերությանն առաջադրված դարսավորությունների համար հիմք է հանդիսացել միայն «Էլոսա» և «Գրիդավ» ՍՊ ընկերությունների հաժիվ-ադրանքագրերը:

4) Ծառայության աշխատակիցների կողմից հաժիվ-ադրանքագրերը համարվել են անադրանքային, այսինքն՝ իրականում գոյություն չունեցող գործարքները հավաստող փաստաթղթեր:

5) Ընկերության նկատմամբ հաժիվարկվել է 38.415.700 ՀՀ դրամ հարկային դարսավորություն:

6) «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՊԿ-ի նշանակման և անհատական կազմակերպության 19.12.2005թ. դասահաժիվագրերով փորձագիտության եզրակացության մեջ արձանագրված է, որ ստուգողների կողմից ակտով դարսավորությունների առաջադրման համար հիմք հանդիսացող հաժիվ-ադրանքագրերը կազմվել են «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ և 23-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 25.08.1998թ. թիվ 525 որոշմամբ հաստատված «Նյութական և ոչ նյութական ակտիվների, ադրանքային նյութական դրամների ձեռքբերման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի կազմման» կարգի դրամագրերին համադասասխան:

7) «Էլոսա» և «Գրիդավ» ՍՊ ընկերությունների կողմից համադասասխան եռամսյակների համար ցույց տրված իրացման քաղաքականությունը արձանագրվել է ԱԱՀ-ի և ԸՄԿ-ի հաժիվարկներում, ֆինանսական հաժիվարկումներում:

8) Համադասասխան հիմքերի բացակայության դասձառով Ծառայության հետաքննության բաժնի ղեկավարի 30.12.2005 թվականի թիվ 10275/5 գրությամբ վերադարձվել են Ընկերության վերաբերյալ հետաքննության բաժնին ուղարկված փաստաթղթերը:

#### **4. Վճարելի դասարանի դասձառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճարելի բողոքը՝ վերը նշված հիմքի սահմաններում՝ Վճարելի դասարանը գտնում է, որ *բողոքն անհիմն է հեկտայլ պատճառաբանությամբ.*

Վճարելի բողոքում հիշատակված ինչպես «ԸՄԿ-ի հաժիվարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, այնպես էլ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 25.08.1998 թվականի թիվ 525 որոշմամբ հաստատված «Նյութական և ոչ նյութական ակտիվների, ադրանքային նյութական դրամների ձեռքբերման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի կազմման» կարգի դրամագրերը ճշգրիտ դասարանի կողմից չկիրառելու վերաբերյալ բողոքի դասձառաբանությունն անհիմն է: Բողոքում, բացի դասաքննության ընթացքում հետազոտված և գնահատված ադրանքագրերի վերաբերյալ բողոք բերած անձը կատարել է սույլ ղեկում այն մասին, որ «...«Էլոսա» և «Գրիդավ» ՍՊ ընկերությունները գործունեություն չեն իրականացնում, հետևաբար նրանց հետ իրական գործարքներ չեն կատարվել, ուստի «Տավրիդա» ՍՊ ընկերության կողմից վերը նշված ընկերություններից ձեռք բերված հաժիվ-ադրանքագրերն անհիմն են և անարժանահավասար»:

ՀՀ ֆադաբանական դասավարության օրենսգրքի 235-րդ հոդվածի համաձայն՝ Վճարելի դասարանի դրամագրերը վերանայում է դասարանների վճիռները և որոշումները՝ վճարելի բողոքում նշված հիմքերի սահմաններում: Այս հոդվածի իմաստով, ելնելով նաև ՀՀ ֆադաբանական դասավարության օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված ընդհանուր

կանոնի դահանջից («Գործին մասնակցող յուրաքանչյուր անձ դեմ է աղացուցի իր դահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները»), բողոքի հիմք հասկացության մեջ ներառված են նաև բողոքի հիմնավորումները: Այդ իսկ դասճառով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում նման հիմնավորումների բացակայությունն ինքնին անհիմն է դարձնում բողոքը, և ՀՀ սնեստական դատարանի կողմից նյութական իրավունքի կիրառման օրինականության սուղգման հիմքն առկա չէ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ սնեստական դատարանը, ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի դահանջներին համադասասխան, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ գնահատել է բոլոր աղացույցները և կիրառել դրանց նկատմամբ կիրառելի իրավական ակտերը: ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի ուժով կրելով աղացուցման դարսականություն՝ գործարկների անատրանֆային լինելու հանգամանքը որևէ դասճառ աղացույցով Ծառայությունը չի աղացուցել:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի այլ իրավական ակտերով սահմանված նորմերին, որոնք սույն որոշման դասճառաբանությունների մասն են կազմում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի (Ջնական դահանջները չարաճախելու արգելի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական դահանջների դահողանման նդասակով անձանց ծանրաբեռնել դարսականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք սրամարելը, եթե նրանց վրա դրված դարսականությունները բովանդակային առումով կասարված են: Օրենքի 43-րդ հոդվածի՝ Աղացուցման դարսականությունը բաժխելը/ հիմքով սույն վարչաիրավական հարաբերությունում կիրառելի նույն օրենքի 10-րդ հոդվածի Հավաստիության կանխավարկածը) համաձայն՝ վարչական մարմնի կողմից ֆննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած սվյալները, սեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեղդերում, ֆանի դեռ վարչական մարմինը հակառակը չի աղացուցել: Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած սվյալների, սեղեկությունների իսկության վերաբերյալ, աղա ինքը դարսավոր է իննուորույն և իր հաճվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Ծառայության կողմից դատարանին ներկայացվել են մի ճարք հաճիվ-աղրանֆազրեր և այլ փաստաթղթեր, սակայն ինչդես դրանց, այնդես էլ կնքված գործարկների անատրանֆային լինելու փաստի հավաստիությունը ծառայության կողմից չի աղացուցվել: Գործում առկա, Ծառայության կողմից ներկայացված աղացույցները բավարար չեն ֆննարկվող փաստական հանգամանքն աղացուցված համարելու համար, հեսևաբար ընկերության կողմից ներկայացված սվյալները և սեղեկությունները դեմ է համարվեն հավաստի, ֆանի որ Ծառայության կողմից հակառակը հիմնավորող որևէ դասճառ աղացույց չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից և դեկավարվելով ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

---

---

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել՝ ՀՀ սննտապահության դատարանի 30.06.2006 թվականի վճիռը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման դաից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnruqropjուն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnruqropjուններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական գործ N 3-1555(ՏԳ)  
Տնտեսական դատարանի վճիռ 2006թ.  
Քաղաքացիական գործ թիվ ՏՎ-85\2006թ.  
Նախագահող դատավոր՝ Կ.ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ  
դատավորներ՝ Ռ.ՀԱԿՈԲՅԱՆ  
Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՉՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ

2006թ. սեպտեմբերի 28-ին

դրնբաց դատական նիստում, քննելով «Լոսոս» արտադրական կոորդինատների (այսուհետ՝ Կոորդինատներ) անվճարումնակության գործով կառավարիչ Լևոն Պետրոսյանի (այսուհետ՝ կառավարիչ) վճռաբեկ բողոքը ՀՀ տնտեսական դատարանի 02.06.2006թ. վճռի դեմ՝ ըստ կառավարչի հայցի ընդդեմ Կոորդինատների անդամներ Էդուարդ Ասատրյանի, Սվետլանա Խալաթյանի և Ռիմա Աղասարյանի՝ գումարի բռնագանձման դատահանջի մասին,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դատարանական նախադասմունքները.**

Դիմելով ՀՀ տնտեսական դատարան՝ կառավարիչը խնդրել է դատաստանողներից յուրաքանչյուրից հոգուս կոորդինատների բռնագանձել 2 520 050 ՀՀ դրամ՝ որդես չկատարած դատարարությունների փոխհատուցում:

ՀՀ տնտեսական դատարանի 27.01.2005 թվականի վճռով հայցը մերժվել է:

Հայցվորի 04.03.2005 թվականի վճռաբեկ բողոքի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանի 14.04.2005 թվականի որոշումով ՀՀ տնտեսական դատարանի 27.01.2005 թվականի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ տնտեսական դատարանի 03.08.2005 թվականի վճռով հայցը մերժվել է:



---

Հայցվորի 22.08.2005 թվականի վճարելի բողոքի հիման վրա ՀՀ վճարելի դասարանի 23.09.2005 թվականի որոշումով ՀՀ սնտեսական դասարանի 03.08.2005 թվականի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նույն դասարան՝ նոր ֆննդության:

ՀՀ սնտեսական դասարանի 02.06.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի՝ վճռվել է ««Լոսոս» արտադրական կոողերաշիվի անդամներ Էդուարդ Ասարյանից, Սվետլանա Խալաթյանից և Ռիմա Աղասարյանից հոգուս «Լոսոս» արտադրական կոողերաշիվի համադարձության կարգով բռնագանձել 500.000 դրամ՝ որդես տեսական սուրֆի գումար և 65.000 դրամ՝ որդես անվճարունակության գործով կառավարչի վարձարության գումար, ընդամենը՝ 565.000 դրամ: Մնացած մասով հայցը մերժել»:

Սույն գործով վճարելի բողոք է ներկայացրել կառավարիչը:

Պատասխանողները ներկայացված վճարելի բողոքին դատասխան չեն ներկայացրել:

## **2. Վճարելի բողոքի հիմքերը, փաստարկները և դաժանջը.**

ՀՀ ֆաղաբաղիական դասավարության օրենսգրքի 130-րդ հողվածի 3-րդ մասի համաձայն՝ դասարանի վճիղը ղեկ է լինի օրինական և հիմնավորված: Դասարանը վճիղը հիմնավորում է միայն դասական նիսում հեկազոսված աղաղույցներով:

ՀՀ սննտասկան դասարանի վճիղը չի համաղասասխանում ՀՀ ֆաղաբաղիական դասավարության օրենսգրքի 130-րդ հողվածին հիմնավորված չլինելու ղասճառաբանությանը, այսինքն՝ դասարանի կողմից հեկազոսված փաստերը չեն համաղասասխանում դասարանի հեկողղուններին:

Ինչ վերաբերում է բողղ բերած անձի այն ղասճառաբանությանը, որ ՀՀ սննտասկան դասարանը խախտել է ՀՀ ֆաղաբաղիական օրենսգրքի 130-րդ հողվածը, քանի որ հայղորը չի նշել իր ղախանղը հիմնավորող իրավական նորմը, աղա այն հիմնավոր չէ հեկայալ ղասճառաբանությանը.

ՀՀ ֆաղաբաղիական դասավարության օրենսգրքի 130-րդ հողվածը չի սահմանում դասավարության մասնակղի որևէ ղարսավորղղուն, այղ թղում՝ ղախանղը հիմնավորող

**ՎՃՈՎՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

---

իրավական նորմերի հիշատակման դասականությունը: Հիշատակված հոդվածի երրորդ մասը վերաբերում է միայն դատարանին և սահմանում է դատական ակտին ներկայացվող առանձին դահանջներ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը, ՀՀ ֆաղաֆագիական դատավարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածների համաձայն, ՀՀ սնտեսական դատարանի 25.09.2006 թվականի թիվ S-1954/2006 վճիռը բեկանելու բավարար հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆագիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Երևանի ֆաղաֆագիական վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ սնտեսական դատարանի 25.09.2006 թվականի թիվ S-1954/2006 վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման դահից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*



---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԳԱՏԱՐԱՆ**

Ավան և Նոր Նորք համայնքների  
առաջին ասյանի դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 2-3505-2006թ.  
Նախագահող դատավոր՝ Մ.Կարամյեսյան

Քաղաքացիական գործ թիվ 3-2125 (Ա)  
2006թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ դատավորներ* Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒԻՉՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ

2006 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում, ֆննելով ՀՀ գլխավոր դատախազի սեղակալի վճռաբեկ բողոքն ըստ Արփենիկ Ոսկանյանի դիմումի՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման դատախազի մասին քաղաքացիական գործով Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ասյանի դատարանի 06.04.2006 թվականի վճռի դեմ,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դատարանական նախադասմունքներ.**

Դիմելով դատարան՝ դիմողը դատախազել է հաստատել Արփենիկ Ոսկանյանի Երևանի Ավան 7-րդ փողոցի թիվ 16 սան հասցեում գտնվող 0.045 հա հողամասի սեփականության իրավունքով ժրադեման փաստը:

Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ասյանի դատարանի 06.04.2006 թվականի վճռով դիմումը բավարարվել է: Վճռվել է հաստատել Արփենիկ Ոսկանյանի կողմից Երևանի Ավան 7-րդ փողոցի թիվ 16 սան հասցեում գտնվող 0.045 հա հողամասը սեփականության իրավունքով ժրադեման իրավաբանական նշանակություն ունեցող փաստը:

Սույն գործով վճռաբեկ բողոքը ներկայացրել է ՀՀ գլխավոր դատախազի սեղակալը:

Արփենիկ Ոսկանյանը ներկայացված վճռաբեկ բողոքին դատասխան չի ներկայացրել:

**2. Սույն վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դատահանրը.**

1/ Դատարանը չի կիրառել ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածը, ՀՀ ֆաղափացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 4-րդ կետը, որոնք մղեց է կիրառել և կիրառել է նույն օրենսգրքի 189-րդ հոդվածը, որը չդրեց է կիրառել, ինչի արդյունքում թույլ է սվել ՀՀ ֆաղափացիական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դատավարական իրավունքի խախտում:

Բողոք բերած անձը նշված դեպքում դատաճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Նշված հասցեում առկա է 29.9 քմ մակերեսով ինֆնական կառույց, հետևաբար դատարանը դատարար էր գործը քննել հայցային վարույթի կարգով և ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն գործի քննությանը մասնակից դարձնել հողամասի սեփականատերին լիազորություններ իրականացնող սուբյեկտին՝ Երևանի ֆաղափացիական:

Դատարանը ՀՀ ֆաղափացիական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածը կիրառելիս հավելի չի առել այն հանգամանքը, որ Երևանի Ավան 7-րդ փողոցի թիվ 16 սան հասցեում գտնվող 0.045 հա հողամասը սրամադրվել է Արփենիկ Ոսկանյանի անունում՝ Խաչիկ Ոսկանյանին: ՀՀ կառավարությանն առընթեր անցարժ գույքի կադաստրի ղեկավար կոմիտեի Նոր Նորք սարածափային ստորաբաժանման կողմից 254 քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 29.9 քմ մակերեսով շինության նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը մերժվել է՝ իրավունքը հաստատող փաստաթղթեր չներկայացնելու հիմքով: Դատարանը դրեց է գործին մասնակից դարձնել կադաստրի ներկայացուցչին, գործը քննել հայցային վարույթի կանոններով, դիմումատերին հնարավորություն ընձեռնելով վիճարկելու դատարանատար անձի գործողությունները:

Այսինքն, դատարանը վճիռ է կայացրել գործին մասնակից չդարձնել Երևանի ֆաղափացիական, ինչպես նաև կադաստրի մարմնի իրավունքների և դատարանությունների վերաբերյալ:

Վերոգրյալի հիման վրա վճռաբեկ բողոք բերած անձը դատահանրել է բեկանել Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ասյանի դատարանի 06.04.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

ա/ Արփենիկ Ոսկանյանի անունում՝ Խաչիկ Ոսկանյանին 1957-59 թվականներին հասկացվել է 0.045 հա հողամաս՝ անհասական կարգով բնակարան կառուցելու համար:

բ/ Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ասյանի դատարանի 10.02.2005 թվականի վճռով բավարարվել է Արփենիկ Ոսկանյանի դիմումն՝ ըստ օրենքի ժառանգությունն ընդունելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու և 05.05.1993 թվականին մահացած անունում՝ Խաչիկ Ոսկանյանի ժառանգական գույքի՝ Երևանի Ավան 7-րդ փողոցի թիվ 16 սան նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու դատահանրելու մասին:

գ/ ՀՀ կառավարությանն առընթեր անցարժ գույքի կադաստրի ղեկավար կոմիտեի Նոր Նորք սարածափային ստորաբաժանման կողմից 09.03.2005 թվականին վերը նշված վճիռի ծագող իրավունքների ղեկավար գրանցում կատարելու մասին Ա.Ոսկանյանի դիմումը մերժվել է իրավունքը հաստատող փաստաթղթեր չներկայացնելու հիմքով:

---

---

**4. Վճռաբեկ դասարանի դասճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքի սահմաններում՝ Վճռաբեկ դասարանը գտնում է, որ *բողոքն անհիմն է հեռկյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ նախկին հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ ճնամերձ հողամասերը, ինչդեպ նաև այգեգործության (ամառանոցի) և բնակելի սան շինարարության ու դրա սողասարկման համար Հայաստանի Հանրապետության ֆաղաֆացիների ունեցած հողամասերն անհատույց կարգով թողնվում են նրանց որդես սեփականություն:

Նշված օրենսգրքի համաձայն՝ բնակելի սան շինարարության համար սրամադրված հողամասն անհատույց կարգով սեփականության իրավունքով թողնվել է **Խ. Ոսկանյանին:** Փաստորեն, **Խ. Ոսկանյանն** օրենքի ուժով նշված հողամասի սեփականատեր է դարձել, հեռաբար հողամասը կազմել է վերջինիս ժառանգական զանգվածի մասը:

Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ասյանի դասարանի 10.02.2005 թվականի վճռով Ա.Ոսկանյանը ճանաչվել է ժառանգությունն ընդունած Երևանի Ավան, 7-րդ փողոցի թիվ 16 սան նկատմամբ և վերջինս այդ հիմքով դարձել է սան սեփականատեր:

Հողամասը ֆաղաֆացու սեփականության ներքո գտնվելու ղայմաններում անհիմն է ՀՀ ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դասավարական իրավունքի խախտման մասին վճռաբեկ բողոքի դասճառաբանությունը, քանի որ սույն գործի փաստերից ելնելով դասարանը Երևանի ֆաղաֆադեսի և կադասրի իրավունքների և դարսականությունների վերաբերյալ վճիռ չի կայացրել:

ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի խախտման վերաբերյալ բողոքի փաստարկը Վճռաբեկ դասարանն անհիմն է համարում, քանի որ սույն գործի հիմքում ընկած հարաբերությունների վրա նշված հոդվածը չի սարածվում այն դասճառաբանությամբ, որ վիճելի հողամասի հասկացումը 1957-59 թվականների ընթացքում կատարվել է այդ դասին գործող օրենքով սահմանված կարգով:

ՀՀ ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դասարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումը քննելիս վեճ է ծագել իրավունքի մասին: Տվյալ դեպքում, երբ տունը և հողամասը գտնվում են Ա. Ոսկանյանի սեփականության ներքո, իրավունքի մասին վեճն առկա չէ:

Վերոգրյալի հիման վրա սույն գործով ՀՀ ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 4-րդ կետը Վճռաբեկ դասարանը կիրառելի չի համարում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դասարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ասյանի դասարանի 06.04.2006 թվականի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման դասից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՈՒՐՆԵՆԻ ԴԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
ֆաղաֆագիական գործերով  
վերաքննիչ դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 06-2571  
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան  
դատավորներ՝ Կ.Հակոբյան  
Ա.Թումանյան

Քաղաքացիական գործ թիվ 3-2048(ՎԴ)  
2006թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆագիական դատարան (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
մասնակցությամբ դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՋՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ*

2006 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում, ֆնելով դիմումատու Լիլիթ Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ՀՀ ֆաղաֆագիական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 18-ի թիվ 06-2571 վճռի դեմ՝ ըստ Լիլիթ Գրիգորյանի դիմումի ընդդեմ ՀՀ Կառավարությանն առընթեր անճարժ գույքի կադաստրի ղեկավար կոմիտեի Կենտրոն սարածֆային ստորաբաժանման (այսուհետ նաև՝ Կադաստր) և երրորդ անձ Երևանի ֆաղաֆագիական մարմնի գործողությունը (անգործությունը) վիճարկելու դախանջի մասին,

**Պ Ա Ր Ջ Ե Ց**

**1. Գործի դատարանական նախադասմությունը.**

Դիմելով դատարան՝ Լիլիթ Գրիգորյանը, դախանջել է դախարել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Կենտրոն սարածֆային ստորաբաժանմանը գրանցել Երևան ֆաղաֆի Դեմիքչյանի ֆակտորի 2ա հասցեում գնվող ընդհանուր 0.00336 հա մակերեսով հողամասի նկատմամբ իր սեֆականության իրավունքը:

Երևանի Կենտրոն և Նորֆ-Մարաւ համայնքների առաջին ախանի դատարանի 2006 թվականի հունիսի 9-ի թիվ 2-1312 վճռով դիմումը քավարավել է:

ՀՀ ֆաղաֆագիական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի

---

18-ի թիվ 06-2571 վճռով Լիլիթ Գրիգորյանի դիմումը մերժվել է:

2006 թվականի սեպտեմբերի 12-ին Լիլիթ Գրիգորյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ բողոքին դասասխսան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներհիշյալ հիմնավորումներով՝

1) ՀՀ ֆաղափացիական գործերով վերաքննիչ դասարանը չի կիրառել «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի առաջին մասը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի առաջին մասը և 68-րդ հոդվածը, որը ղեկ է կիրառել, այլ կիրառել է ՀՀ հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 11-րդ մասը, որը չղեկ է կիրառել:

Բնակելի սան կառուցման համար վարձակալությամբ հասկացված ղեկական հողամասերը անհատույց սեփականության իրավունքով փոխանցվում են հողամասի օրինական սիրադեպին, եթե սլյալ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում: Վեճի առարկա հողամասի՝ վերոնշյալ սահմանափակումների շարքում ընդգրկված չլինելը հաստատվում է Երևանի ֆաղափացիական ֆաղափացիության և ճարտարապետության վարչության 2006 թվականի մայիսի 30-ին թիվ 18-06/1-Գ-243 գրությամբ:

Դասարանը դիմումատուին առաջադրել է լրացուցիչ դարձակալություն՝ աղացուցել, որ հողամասը կարող է մասնավորեցվել ՀՀ հողային օրենսգրքի 62-րդ հոդվածին համադասասխսան, քանի որ դիմումատուի դահանջի մերժումը դասճառաբանվել է հենց այդ հոդվածով՝ օտարման անթույլատրելիությամբ:

2) Դասարանը սխալ է մեկնաբանել «Գույքի նկատմամբ իրավունքների ղեկական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը:

Կադաստրը մերժել է հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումը, դասճառաբանելով, որ Երևանի ֆաղափացիական 1998 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1194 որոշման համաձայն՝ կնքված հողի վարձակալության դայմանագրով վարձակալության է սրամադրվել Դեմիրճյան փակուղի թիվ 4 բնակելի սան հողամասի մի մասը: Հողամասի իրավունքի փոփոխություն կարող է կատարվել համադասասխսան դարձաբանում ներկայացնելուց և որդես երեք առանձին միավորի ղեկական գրանցման դիմում ներկայացնելուց հետո:

Նշված հոդվածով սահմանվում են ղեկական գրանցման մերժման հիմքերը, որոնց թվում բացակայում է կադաստրի կողմից նշված հիմքը:

3) Դասարանը խախտել է ՀՀ ֆաղափացիական դասավարտության օրենսգրքի 51-րդ և 53-րդ հոդվածները, 64-րդ հոդվածի առաջին մասը, 162-րդ հոդվածի 6-րդ մասը:

Դասարանը չի ադահովել գործում եղած բոլոր աղացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն, չի կիրառել հասուկ հայցային վարույթի առանձնահատկությունը՝ աղացույցման դարձակալության մասով:

Մասնավորապես ղեկական մարմնի ակտն անվավեր ճանաչելու մասին դիմումը քննելիս նշված ակտն անվավեր ճանաչելու համար հիմք ծառայած հանգամանքների աղացույցման դարձակալությունը դրվում է ակտն ընդունած ղեկական մարմնի կամ

դաճեցնասար անձի վրա, մինչդեռ Կադասրը չի աղացուցել իր անգործության համար հիմք ծառայած հանգամանքները և չի ներկայացրել որևէ աղացույց ի հիմնավորումն իր փաստարկների:

**3. Վճռաբեկ բողոքի ֆննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի ֆննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևանի ֆաղաֆաղետի 28 դեկտեմբերի 1998 թվականի թիվ 1194 որոշման համաձայն՝ ճանաչվել է Լիլիթ Գրիգորյանի սեփականության իրավունքը Դեմիրճյան փակուղի թիվ 2ա հասցեում գտնվող 33.6մ<sup>2</sup> բնակելի սան նկատմամբ և միաժամանակ վարձակալության իրավունքով հասկացվել է բնակելի սան կողմից զբաղեցվող 33.6մ<sup>2</sup> հողամասը:

2) 1999 թվականի ապրիլի 1-ին Երևանի ֆաղաֆաղետարանի և Լիլիթ Գրիգորյանի միջև կնքվել է Երևան ֆաղաֆի Դեմիրճյան փակուղի 2ա հասցեում գտնվող 0.00336 հա մակերեսով հողամասի վարձակալության դայմանագիր՝ «բնակելի սան կառուցման» նդասակով:

3) 1999 թվականի մայիսի 14-ին Լիլիթ Գրիգորյանին սրվել է թիվ 0121083 Երևանի Դեմիրճյան փակուղի թիվ 2ա հասցեում գտնվող բնակելի սան սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4) Լիլիթ Գրիգորյանը 2006 թվականի փետրվարի 3-ին ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Կենտրոն սարածֆային ստորաբաժանմանը հասցեագրած թիվ Կ-235 դիմումով խնդրել է Դեմիրճյան 2ա հասցեում գտնվող հողամասի իրավունքի փոփոխություն կատարել՝ գրանցել իր սեփականության իրավունքը:

5) Կադասրը 2006 թվականի ապրիլի 10-ի թիվ Ել-711 գրությամբ Լիլիթ Գրիգորյանին դասասխանել է, որ հողամասի իրավունքի ուղղում չի կարող կատարվել, քանի որ Երևանի ֆաղաֆաղետի 1998 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1194 որոշման համաձայն՝ կնքված հողի վարձակալության դայմանագրով վարձակալության է սրամադրվել Դեմիրճյան փակուղի թիվ 4 բնակելի սան հողամասի մի մասը: Հողամասի իրավունքի փոփոխություն կարող է կատարվել համադասասխան դարգաբանում ներկայացնելուց և որդես երեք առանձին միավորի դեսական գրանցման դիմում ներկայացնելուց հետո:

6) Երևանի ֆաղաֆաղետարանի 2006 թվականի մայիսի 11-ի թիվ 18-09/2-1528 գրության համաձայն՝ Դեմիրճյան փակուղի 2ա հասցեում հողհասկացման հիմքեր վարչության արխիվային նյութերում չեն հայտնաբերվել, իսկ ներկայացված սեփականության վկայականները, ինչդեռ նաև սեղագրական հանույթը բավարար չեն 1997 թվականի փետրվարի 12-ի սեփականության վկայականով Աժոս Մարգարյանին դասկանող Դեմիրճյան փակուղի թիվ 4 հասցեում գտնվող հողամասի դիրքը դարգելու համար:

7) Երևանի ֆաղաֆաղետարանի 2006 թվականի մայիսի 11-ի թիվ 18-06/1-գ-243 գրության համաձայն՝ Դեմիրճյան փակուղի թիվ 2ա հասցեում գտնվող 0.00336 հա հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, սակայն նույն օրենսգրքի 62-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ այն չի կարող օտարվել:

---

---

**4. Վճռաբեկ դասարանի դասձառաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում՝ Վճռաբեկ դասարանը գտնում է՝

1) *բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի առաջին հոդվածի չորրորդ դարբերության համաձայն՝ հողի մասնավորեցումն իրականացվում է Հողային օրենսգրքով սահմանված կարգով:

ՀՀ Հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ հողամասերի նկատմամբ ֆաղափացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է դրաների և համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առուվաճառի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

Սույն օրենսգրքի 62-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հողամասերի մասնավորեցումը դեռության և համայնքների սեփականության ներքո գտնվող հողերից սեփականության իրավունքով հողամասերի սրամադրումն է ֆաղափացիներին և իրավաբանական անձանց:

«ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը դրաների կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օրենսդրությամբ սահմանված կարգով անհատույց (մեծական) օգտագործման կամ վարձակալության իրավունք ձեռք բերած և այդ իրավունքները գրանցած իրավաբանական և ֆիզիկական անձանց, ներառյալ՝ օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետի հիմքով ձեռք բերված (բացառությամբ օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի)՝ նույն օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում են՝ սնամեծ, այգեգործական, ինչդեպես նաև բնակելի սան կառուցման և սոցիալական համար հասկացված հողամասեր:

Այսպիսով, «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի առաջին մասով նախատեսվում է դեռության սեփականություն հանդիսացող հողամասի մասնավորեցում, սահմանելով սեփականության իրավունքի փոխանցման դարձադրական դրամաներ, այն է՝ օգտագործման կամ վարձակալության իրավունքի առկայությունը, ինչդեպես նաև հողամասի՝ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում ընդգրկված չլինելու փաստը:

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա Լիլիթ Գրիգորյանն ունի Երևանի Դեմիրճյան փակուղի թիվ 2ա հասցեում գտնվող 0.00336 հա մակերեսով հողամասի նկատմամբ վարձակալության իրավունք, և հողամասը ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում:

Վճռաբեկ դասարանը գտնում է, որ սույն գործով առաջացած իրավահարաբերության նկատմամբ Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 11-րդ մասը կիրառելի չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսվում է կառուցադրված հողամասի սեփականաձեռքման երկու դրաման՝ հողամասի օգտագործում հողի նդասակային նշանակությանը համադասասխան և հողամասի վրա կառուցված շինության համադասասխանություն ֆաղափաշինական փաստաթղթերին:

Գասարանը հաճվի չի առել այն հանգամանքը, որ վեճի առարկա հանդիսացող հողամասը դիմումատուին է հանձնվել բնակելի սան կառուցման նոդասակով, իսկ դրա վրա կառուցված շինությունն արդեն իսկ հանդիսանում էր դիմումատուի սեփականությունը, այսինքն՝ հողամասի նոդասակային օգտագործումը, ինչդեռ նաև այդ շինության՝ ֆաղափառական փաստաթղթերին համադասասխսան կառուցված լինելը կասկածի սակ չի կարող դրվել:

Բացի այդ, սույն գործով հաստատված փաստերի հիման վրա Լիլիթ Գրիգորյանի սեփականությունը ստացել է ղեկավար գրանցում, որի համար հիմք է հանդիսացել «Ինֆնական կառուցված շինությունների և ինֆնական զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի հիման վրա Լ.Գրիգորյանի շինությունն օրինական ճանաչելու մասին Երևանի ֆաղափառակցի կայացրած որոշումը:

Նման փաստերի առկայությունն ինֆնին բացառում է սույն իրավահարաբերության նկատմամբ Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 11-րդ մասի կիրառումը:

2) *Բողոքն երկրորդ հիմնով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ ֆաղափառական գործերով վերաբնակիչ դասարանը, ղեկավարվելով «Գույքի նկատմամբ իրավունքների ղեկավար գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, եկել է եզրահանգման այն մասին, որ վարձակալության սրամադրված հողամասի մի մասը համադրված է Դեմիրճյան փակուղի թիվ 4 սան հողամասի հետ և առանց օրենսդրությամբ սահմանված կարգով համադրված հողամասերի հարցը լուծելու, իրավունքների ղեկավար գրանցում կատարելը կհակասի գործող օրենսդրության դասանջներին:

ՀՀ ֆաղափառական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների սահմանափակումները, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են ղեկավար գրանցման: Տվյալ դեպքում Լիլիթ Գրիգորյանի սեփականության իրավունքը ծագել է «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի առաջին մասի ուժով՝ օգտագործման կամ վարձակալության իրավունքի առկայության, հողամասը՝ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում ընդգրկված չլինելու և հողի կադաստրային վճարումները կատարելու դրանով:

Կադաստրի կողմից մերժվել է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման դիմումը, այն դասառաբանությամբ, որ հողամասի իրավունքի ուղղում չի կարող կատարվել, քանի որ Երևանի ֆաղափառակցի 1998 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 1194 որոշման համաձայն՝ կնքված հողի վարձակալության դրամագրով վարձակալության է սրամադրվել Դեմիրճյան փակուղի թիվ 4 բնակելի սան հողամասի մի մասը: Հողամասի իրավունքի փոփոխություն կարող է կատարվել համադասասխսան դարգաբանում ներկայացնելուց և որդես երեք առանձին միավորի ղեկավար գրանցման դիմում ներկայացնելուց հետո:

Այսպիսով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Կենտրոն սարածային ստորաբաժանման կողմից կայացվել է վարչական ակտ՝ Լիլիթ Գրիգորյանի համար սահմանելով դասականություններ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը ղեկ է դարձնակի



---

հիմնավորում, որում ղեկավարելու և նշանակելու համապատասխան որոշում ընդունելու բոլոր փաստական և իրավական հիմքերը: Չնայած այն հանգամանքին, որ Կադասրի կողմից չի նշանակվել այն իրավական ակտը, որով նա ղեկավարվել է նման վարչական ակտ կայացնելիս, Վճռաբեկ դատարանը նդատական հարմար է գտնում անդրադառնալ նման ակտի կայացման համար օրենքի ուժով հնարավոր հիմնավորումներին:

Կադասրի կողմից սվյալ իրավահարաբերության համար կիրառելի միակ իրավական հիմքը կարող էր հանդիսանալ «Գույքի նկատմամբ իրավունքների ղեկական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը, համաձայն որի՝ ղեկական գրանցումը մերժվում է, եթե գրանցման համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության ղահանջներին, այսինքն՝

ա) չեն համապատասխանում օրենսդրությանը, կամ դրանցով խախտվել են օրենսդրության ղահանջները, կազմված են օրենքով սահմանված կարգին ոչ համապատասխան,

բ) բացակայում է ղեկական գրանցման վճարի անդորրագիրը,

գ) ներկայացվել են մասիտով գրված, ջնջումներով, ուղղումներով, ինչդես նաև ոչ դատաւճ ձևակերդված փաստաթղթեր:

Արգելվում է այլ դատաւճներով գույքի նկատմամբ իրավունքների ղեկական գրանցման մերժումը, այդ թվում՝ աննդատական հարմարության դատաւճաբանությանը:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել դատականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Տվյալ դեդում Կադասրը միայն ծագած իրավունքները գրանցող ղեկական մարմին է և չի կարող անձանց համար սահմանել «Գույքի նկատմամբ իրավունքների ղեկական գրանցման մասին» ՀՀ օրենքով չնախատեսված փաստաթղթեր կամ հիմնավորումներ ներկայացնելու դատականություններ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում դատունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաւճի առնելով օրենքի ղահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չղեկ է փոփոխվի դատ իմաստը:

«Գույքի նկատմամբ իրավունքների ղեկական գրանցման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով սահմանված ղեկական գրանցման մերժման հիմքը, այն է՝ գրանցման համար ներկայացված փաստաթղթերն օրենքով սահմանված կարգին ոչ համապատասխան կազմված լինելը ղեկ է մեկնաբանվի արտահայտության և դրանում դատունակվող բառերի տառացի նշանակությամբ՝ չփոփոխելով դատ իմաստը, չնեղացնելով կամ չընդդայնելով այն: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գրանցման համար ներկայացված փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգին համապատասխան կազմված լինելու հանգամանքի տուգումը ղեկ է հանգի փաստաթղթերի կազմի, դրանցից յուրաբանչյուրի ձևի և բովանդակության խնդիրներին, այլ ոչ թե այդ փաստաթղթերի հետ չառնչվող այլ փաստաթղթերի ուտումնասիրությանը, այդ փաստաթղթերից գատ այլ փաստաթղթեր (դիմումներ) ներկայացնելու ղահանջին, որևէ տուքյեկի՝ օրենքով չնախատեսված կարծիքին կամ եգրակացությանը հղելուն կամ որևէ տուքյեկի (այդ թվում նաև՝ այլ վարչական մարմնի) իրավատության խնդիրներին:

Կադասրի մերժումը Լիլիթ Գրիգորյանի համար առաջացնում է լրացուցիչ

**ՎՃՈՎՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

դասականություններ, որոնք սահմանված չեն օրենքով կամ դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտով:

3) *Բողոքն երրորդ հիմքով հիմնավոր է հեկկյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Պետական մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց Պատճենասար անձանց ակտն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումը ֆիննելիս նշված ակտն ընդունելու համար հիմք ծառայած հանգամանքների աղացուցման դասականությունը դրվում է ակտն ընդունած մարմնի կամ Պատճենասար անձի վրա:

ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաքննիչ դատարանը աղացուցված է համարել այն հանգամանքը, որ առկա է հողամասերի համադրում այն դարազայում, երբ դատաստիսանողի կողմից չի ներկայացվել այդ հանգամանքը հիմնավորող որևէ աղացույց:

Ավելին, սույն գործով հաստատված փաստերի հիման վրա՝ Երևանի ֆաղաֆադեսարանը 2006 թվականի մայիսի 11-ի թիվ 18-09/2-1528 գրությամբ Դեմիրճյան փակուղի 2ա հասցեում Լիլիթ Գրիգորյանին դատականող 33.6 մն մակերեսով հողամասը Դեմիրճյան փակուղի թիվ 4 հասցեում գտնվող հողամասի հետ համադրված լինելու վերաբերյալ հայցնել է, որ Դեմիրճյան փակուղի թիվ 2ա հասցեում հողահատացման հիմքեր վարչության արխիվային նյութերում չեն հայտնաբերվել, իսկ ներկայացված սեփականության վկայականները, ինչդեպ նաև տեղագրական հանույթը բավարար չեն 1997 թվականի փետրվարի 12-ի սեփականության վկայականով Աոս Մարգարյանին դատականող Դեմիրճյան փակուղի թիվ 4 հասցեում գտնվող հողամասի դիրքը դարգելու համար:

Վերը նշված դատառաբանությամբ Վճռաքել դատարանը գտնում է, որ ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի դատահանգները՝ չի աղահովել գործում եղած բոլոր աղացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն:

Այսդիսով, վճռաքել բողոքի հիմքերի առկայությունը բավարար է ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 226-րդ և 227-րդ հոդվածների համաձայն ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաքննիչ դատարանի վճիռը բեկանելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաքել դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Լիլիթ Գրիգորյանի վճռաքել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաքննիչ դատարանի 2006 թվականի հուլիսի 18-ի թիվ 06-2571 վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր ֆննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման դատից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԳԱՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության  
վերաբնիչ դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 06-3082  
Նախագահող դատավոր՝ Ա.Թումանյան  
դատավորներ՝ Տ.Սահակյան  
Ա.Խառնայան

Քաղաքացիական գործ թիվ 3-2300 (ՎԴ)  
2006թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությամբ Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
մասնակցությամբ դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՉՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ*

2006 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում քննարկելով Սամվել Չախարյանի վճռաբեկ բողոքն ըստ Չոյա Չախարյանի հայցի ընդդեմ Սամվել Չախարյանի՝ ալիմենսի չափը փոփոխելու դիմումի մասին թիվ 06-3082 քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական գործերով վերաբնիչ դատարանի (այսուհետ՝ նաև Դատարան) 20.09.2006 թվականի վճռի դեմ,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դատարանական նախադասմությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվորը դիմում է փոփոխել նախկինում սահմանված ալիմենսի չափը և յուրաքանչյուր երեխայի համար իր նախկին ամուսնուց՝ Սամվել Չախարյանից բռնագանձել 15.000 ՀՀ դրամի չափով ալիմենս:

Կոսայի մարզի առաջին ասյանի դատարանի 14.07.2006 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ քաղաքացիական գործերով վերաբնիչ դատարանի 20.09.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է: Վճռվել է Սամվել Չախարյանից հոգու Չոյա Չախարյանի բռնագանձել ալիմենս որդես նրանց երկու երեխաների ադրուսի միջոց՝ յուրաքանչյուրի համար ամսական 15000 ՀՀ դրամի չափով, մինչև չափահաս դառնալը:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սամվել Չախարյանը:  
Վճռաբեկ բողոքին դասասխսան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և դատանքը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածը, որը դիմում է կիրառել:

Բողոք բերած անձը նշված դեպքում դատառաքանել է հետևյալ փաստարկով:

Վերաքննիչ դատարանն ալիմենտի չափը սահմանելիս հաշվի չի առել դասասխսանողի գույքային, ընտանեկան դրությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ինքը հանդիսանում է երրորդ խմբի զինվորական հաշմանդամ, չունի մշակական աշխատանք, խնամքին ունի երկու մանկահասակ երեխաներ, կինը երկրորդ խմբի հաշմանդամ է: Բողոք բերած անձի մղումամբ՝ վերաքննիչ դատարանի վճիռը վստահության և զրկել նրանց աղբյուրի և գոյասնելու իրավունքը:

Բողոք բերած անձը դատանք է բեկանել ՀՀ ֆաղափարական գործերով վերաքննիչ դատարանի 20.09.2006 թվականի վճիռը և օրինական ուժ սալ Կոստայի մարզի առաջին ասյանի դատարանի 14.07.2006 թվականի վճիռն:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Սամվել և Չոյա Չախարյաններն ամուսնացել են 1995 թվականին: Համատեղ ամուսնությունից ունեցել են երկու երեխա:

2) Չոյա Չախարյանը և Սամվել Չախարյանը ամուսնալուծվել են 2000 թվականին: Կոստայի մարզի առաջին ասյանի դատարանի 09.12.2002 թվականի վճռով Սամվել Չախարյանից հոգու Չոյա Չախարյանի խնամքին զսնվող երկու երեխաների՝ վճռվել է բռնագանձել ալիմենտ կայուն դրամական գումարով, յուրաքանչյուր երեխայի համար 4000 դրամի չափով՝ մինչև նրանց չափահաս դառնալը:

3) Պատասխանող Ս.Չախարյանը 2003 թվականին երկրորդ անգամ ամուսնացել է և ներկայումս նոր ամուսնությունից ունի երկու մանկահասակ երեխա:

4) Պատասխանողը երրորդ, իսկ կինը՝ երկրորդ խմբերի հաշմանդամներ են:

5) Պատասխանողը չունի վարձատրվող աշխատանք:

**4. Վճռաբեկ դատարանի դատառաքանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը՝ նշված հիմքի սահմաններում Վճռաբեկ դատարանը զսնում է, որ բողոքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ ալիմենտի ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար չդիմացվող է դատարանի կողմից սահմանված նվազագույն աշխատավարձի չափից, իսկ այդ բաժինների չափերը կարող են դատարանով նվազեցվել կամ ավելացվել՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը:

---

ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաբնիչ դասարանը, որդես 15000 դրամ ալիմենսի չափ սահմանելու հիմնավորում՝ իր վճռում հղել է Հայաստանում սահմանված նվազագույն աշխատավարձի չափին:

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ օրենսգրքերի, օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության և վարչապետի որոշումների իմաստով որդես հաշվարկային հիմք չի կարող ընդունվել նույն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը (15000 դրամ): Նշված ակտերում որդես հաշվարկային հիմք ընդունվում է 1000 դրամը:

Հետևաբար, ալիմենսի ամենամսյա վճարումների չափը որոշելիս դասարանը որդես հաշվարկային հիմք դեռ է ընդունել 1000 դրամը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կայուն դրամական գումարով ալիմենսի չափը որոշում է դասարանը՝ ելնելով երեխայի նախկին կենսաաղահովման մակարդակի առավելագույն դահողանման հնարավորությունից՝ հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուժադրության արժանի Եահերը:

Սույն գործով դասասխանող Սամվել Չախարյանը 2003 թվականին ամուսնացել է երկրորդ անգամ և ներկայումս ունի երկու մանկահասակ երեխա:

Ալիմենսի ամենամսյա վճարումների չափը որոշելիս դասարանը հաշվի չի առել դասասխանողի գույքային ու ընտանեկան դրությունը և ուժադրության արժանի Եահերը, մասնավորապես այն, որ դասասխանողը մեծական աշխատանքի չունի, 2003 թվականին կազմել է նոր ընտանիք, վերջին ամուսնությունից ունի երկու մանկահասակ երեխա, ինքը և կինը հաշվարկային են:

ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի իրավունք: Սահմանադրական այս երաշխիքը ենթադրում է յուրաքանչյուր անձի առողջության դահողանման և կենսագործունեության աղահովման համար անհրաժեշտ, միջազգայնորեն ընդունված, ֆիզիոլոգիական, առողջադահական և սոցիալական նորմատիվներով հաշվարկված սննդամթերքի և հիմնավորված գործակիցներով հաշվարկված ոչ դարենային աղահոսների նվազագույն ֆանակի աղահովման իրավունք:

Հաշվի առնելով սույն գործի փաստական հանգամանքները, որոնք վերաբերում են դասասխանողի ընտանեկան և սոցիալական դրությանը, Վճռաբեկ դասարանը գտնում է, որ վերաբնիչ դասարանի դասական ակտի կատարման արդյունքում, կարող է առաջանալ Սամվել Չախարյանի և նրա ընտանիքի՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված բավարար կենսամակարդակի իրավունքի խախտման իրական վսանգ:

Այսդիտով, սույն բողոքի հիմքի առկայությունը, ՀՀ ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն, ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաբնիչ դասարանի 20.09.2006 թվականի վճիռը բեկանելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղաֆացիական դասավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դասարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Սամվել Չախարյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաքննիչ դատարանի 20.09.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրադարակման դաիից և ենթակա չէ բողոքարկման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnrագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnrագրումներ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԳԱՏԱՐԱՆ**

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով  
վերաբերող դատարանի վճիռ  
Քաղաքացիական գործ թիվ 06-2357  
Նախագահող դատավոր՝ Գ.Մասինյան  
դատավորներ՝ Լ.Գրիգորյան  
Ն.Հովսեփյան

Քաղաքացիական գործ թիվ 3-2305 (ՎԳ)  
2006թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆաղիական դալարը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահությամբ* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությամբ* դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՉՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ

2006 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաց դատական նիստում, ֆններով Մառլեն Հակոբյանի ներկայացուցչի վճռաբեկ բողոքն ըստ Ալինա Ավետիսյանի հայցի ընդդեմ Մառլեն Հակոբյանի՝ ըստ օրենքի հասանելի ժառանգական գույքն առանձնացնելու դաժանցի մասին թիվ 06-2357 ֆաղաֆաղիական գործով ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբերող դատարանի 04.10.2006 թվականի վճիռն ղեմ,

**Պ Ա Ր Չ Ե Ց**

**1. Գործի դատարանական նախադասմունքները.**

Գիմներով դատարան՝ հայցվորը դաժանցել է համատեղ սեփականություն հանդիսացող գույքից որդես ժառանգական գույք առանձնացնել իր հանգուցյալ ամուսնու՝ Մրսեն Հակոբյանի բաժինը և հարգելի ճանաչել ժառանգության ընդունման ժամկետի բացթողումը:

Վայոց ձորի մարզի առաջին ասյանի դատարանի 10.05.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբերող դատարանի 04.10.2006 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոքը ներկայացրել է Ս.Հակոբյանի ներկայացուցիչը:  
Վճռաբեկ բողոքին դասասխսան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքեր, փաստարկները և դատանցը.**

Սույն վճռաբեկ բողոքը ֆննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներհիշեցյալ հիմնավորումներով.

1) վերաֆննիչ դասարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի դատանցները:

Բողոք բերած անձը նշված դեպքում դասձառաբանել է հետևյալ փաստարկով.

Հայցվորը դասարանին չի ներկայացրել ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու՝ օրենքով նախատեսված հարգելի դասձառ: Մինչդեռ, վերաֆննիչ դասարանն Ա.Ավետիսյանի կողմից ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողումն անհիմն ճանաչել է հարգելի:

2) վերաֆննիչ դասարանը խախտել է ՀՀ ֆաղաֆացիական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի դատանցները, ինչի արդյունքում չի կիրառել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դաշտանության մասին Եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը, ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը և 31-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասը, 201-րդ հոդվածը և 1186-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք լիարժեք է կիրառել:

Բողոք բերած անձը նշված դեպքում դասձառաբանել է հետևյալ փաստարկով.

Գործի ֆննությամբ ձեռք չի բերվել որևէ աղացույց այն մասին, որ վեճի առարկան՝ Եղեգնաձոր ֆաղաֆի Մղանդարյան 35 հասցեում գտնվող տունը հանդիսանում է հանգուցյալ Արսեն Հակոբյանի սեփականությունը: Դասարանը, ըստ էության, առանց դասձառ հիմնավորման, ճանաչել է Ալինա Ավետիսյանի և նրա երեխաների սեփականության իրավունքը Մառլեն Հակոբյանի սեփականությունը հանդիսացող սան նկատմամբ:

3) վերաֆննիչ դասարանը չի կիրառել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված դեպքում դասձառաբանել է հետևյալ փաստարկով.

Նշված հոդվածի համաձայն, իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների գործողությունները սարածվում են դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ: Հետևաբար, ՀՀ ֆաղաֆացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասի փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել 10.10.2005 թվականին, և սահմանում են, որ հողամասի սեփականատերը ձեռք է բերում իրեն դատարանից հողամասի վրա կառուցված շենքերի, շինությունների և այլ անշարժ գույքի սեփականության իրավունք, չեն կարող սարածվել 1963 թվականին դասասխսանողի հոր կողմից կառուցված շինության վրա:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը դատանցել է բեկանել ՀՀ ֆաղաֆացիական գործերով վերաֆննիչ դասարանի 04.10.2006 թվականի վճիռը՝ սան և սնամեղձ հողամասի մասով և այդ մասով գործն ուղարկել նոր ֆննության:

**3. Վճռաբեկ բողոքի ֆննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի ֆննության համար էական նշանակություն ունեն հետևյալ



---

փաստերը՝

1) Եղեգնաձոր ֆաղափ Սողանդարյան փողոցի թիվ 35 բնակելի տունը կառուցվել է 1963 թվականին՝ Երանոս Հովհաննեսի Հակոբյանի կողմից: Այդ տունը գրանցվել է նրա որդի Մառլեն Երանոսի Հակոբյանի անունով, որտեղ ավելացել են նաև օժանդակ կառույցներ և շենքը վերակառուցվել է:

2) 05.04.1991 թվականին հողի սեփականաձեռքմանը մասնակցել են Մառլեն Հակոբյանը, նրա կինը՝ Ալվարդ Թումանյանը, դուստրը՝ Ալիսա Հակոբյանը, որդին՝ Արմեն Հակոբյանը և հայցվորի ամուսինը՝ Արսեն Հակոբյանը, որոնց սեփականաձեռքմանը վերաբերող հարցերը 0.66 հա հողամաս:

3) Արսեն Հակոբյանը ծնվել է 1965 թվականին, ամուսնացել է Ա.Ավետիսյանի հետ 1996 թվականին, համատեղ ամուսնության ընթացքում ունեցել են երկու երեխա՝ Արման Արսենի Հակոբյան և Ալլա Արսենի Հակոբյան: Արսեն Հակոբյանը մահացել է 19.05.2004 թվականին:

4) Ժառանգության իրավունքի վկայական ստանալու խնդրանքով Ա.Ավետիսյանը դիմել է նոտարական գրասենյակ, սակայն ստացել է մերժում այն ղախտաբանությամբ, որ բաց է թողել ժառանգությունն ընդունելու համար սահմանված ժամկետը: Մույն գործով հայրը ներկայացվել է դատարան 01.03.2006 թվականին:

**4. Վճռաբեկ դատարանի ղախտաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ՝

*1) վճռաբեկ բողոքն առաջին հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ ֆաղափագիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգի դիմումի հիման վրա դատարանը կարող է նրան ձանաչել ժառանգությունն ընդունած՝ հարգելի համարելով ժամկետը բաց թողնելու ղախտները, եթե դարձվի, որ ժամկետը բաց թողնելու ղախտ է դարձել այն հանգամանքը, որ ժառանգը չգիտեր և դարձավ չէր իմանալ ժառանգության բացման մասին, ու դայմանով, որ ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողած ժառանգն այդ ժամկետը բաց թողնելու ղախտները վերացվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմել է դատարան:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ դատարանը կարող է հարգելի ձանաչել ժառանգությունն ընդունելու ժամկետը բաց թողնելու ղախտները միայն այն դեպքում, երբ ժառանգը կաղաքուցի, որ չգիտեր և դարձավ չէր իմանալ ժառանգության բացման մասին, այսինքն՝ ժառանգատուի մահվան մասին (ՀՀ ֆաղափագիական օրենսգրքի 1187-րդ հոդված) և այն դայմանով, որ իմանալուց հետո վեց ամսվա ընթացքում դիմել է դատարան:

Նշված ղախտաբանությունների հիման վրա հիմնավոր է ՀՀ ֆաղափագիական օրենսգրքի 1228-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստակրը, քանի որ վերաբնիչ դատարանն առանց որևէ ղախտաբանության հարգելի է ձանաչել Ա. Ավետիսյանի կողմից ժառանգությունն ընդունելու ժամկետի բացթողումը:

*2) վճռաբեկ բողոքն երկրորդ հիմքով հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

ՀՀ ֆաղափագիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

## **ՎՃՈՒՔԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգասուին դասկանող գույքը:

Վերաբերյալից դատարանը, հաստատելով համարելով Մառլեն Հակոբյանի և նրա ընտանիքի անդամների, այդ թվում՝ Արսեն Հակոբյանի կողմից 05.04.1991 թվականին հողամասը սեփականացնող հանգամանքը, միաժամանակ, ճանաչել է Արսեն Հակոբյանի սեփականության իրավունքը 1963 թվականին կառուցված սան նկատմամբ: Այսինքն՝ ըստ էության, ժառանգական զանգվածի մեջ ընդգրկվել է նաև ժառանգասուին չդասկանող գույքը:

Վերը նշված դատաճառաբանության հիման վրա, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր են նաև ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի, 31-րդ հոդվածի 1-ին մասի ՀՀ ֆաղափարական օրենսգրքի 163-րդ հոդվածի խախտման մասին վճռաբեկ բողոքի փաստաթղթերը, քանի որ Մառլեն Հակոբյանի սեփականության (սեփականության իրավունքը գրանցված է) նկատմամբ, առանց դրա դադարելու, ըստ էության, ճանաչվել է մեկ այլ անձի՝ Արսեն Հակոբյանի սեփականության իրավունքը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների դաշտանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարելի գրել սեփական գույքից՝ բացառությամբ հանրային շահերի դաշտանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված դրամաներով: Այստիպով, դատարանի կողմից խախտվել է նաև Կոնվենցիայի 1-ին արձանագրության նշված հոդվածի դրահանգը:

3) *վճռաբեկ բողոքն երրորդ հիմնով անհիմն է:*

Բողոքաբերվող վճռում վերաբերյալից դատարանը ՀՀ ֆաղափարական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասը չի կիրառել, հետևաբար այդ հիմնով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասը չկիրառելու (խախտելու) վերաբերյալ ներկայացված՝ սույն բողոքի երրորդ հիմնի փաստաթղթերն անհիմն են:

Այստիպով, վճռաբեկ բողոքի առաջին և երկրորդ հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը ՀՀ ֆաղափարական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի համաձայն վերաբերյալից դատարանի վճիռը բեկանելու բավարար հիմք է համարում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ֆաղափարական դատավարության օրենսգրքի 236-239-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Մ Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ ֆաղափարական գործերով վերաբերյալից դատարանի 04.10.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման դրանից և ենթակա չէ բողոքաբերման:

*ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ usnruագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ usnruագրություններ*

---

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԳԱՏԱՐԱՆ**

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով  
վերաբնիչ դատարանի վճիռ  
Քաղաֆաղիական գործ թիվ 06-3209  
Նախագահող դատավոր՝ Վ.Ավանեսյան  
դատավորներ՝ Գ.Խաչատրյան  
Կ.Հակոբյան

Քաղաֆաղիական գործ թիվ 3-2316(ՎԳ)  
2006թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆաղիական դալաաը (այսուհեա՝ Վճռաբեկ դատարան)

*նախագահությաը* Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆԻ  
*մասնակցությաը* դատավորներ Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
Է.ՀԱՅՐԻՅԱՆԻ  
Ս.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
Վ.ԱԲԵԼՅԱՆԻ  
Ս.ԳՅՈՒՐՁՅԱՆԻ  
Ս.ԱՆՏՈՆՅԱՆԻ

2006 թվականի նոյեմբերի 30-ին

դռնբաղ դատական նիստում, ֆննելով Ռ.Տեր-Վարդանյանի վճռաբեկ բողոքն ըստ Ռ.Տեր-Վարդանյանի դիմումի ընդդեմ ՀՀ գլխավոր դատախազության՝ դատաանատար անձի գործողությունները վիճարկելու մասին թիվ 06-3209 ֆաղաֆաղիական գործով ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբնիչ դատարանի 29.09.2006 թվականի վճռի դեմ,

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախադատանությունը.**

Գիմելով դատարան Ռ.Տեր-Վարդանյանը դահանջել է դատավորեցնել ՀՀ գլխավոր դատախազության կոռուողիայի դեմ դայֆարի բաժնի դատախազին թույլ սալ ծանոթանալ թիվ 61203305 ֆրեական գործի նյութերին և կատարել դատաանահանումներ:

Կենտրոն և Նորֆ-Մարտե համայնֆների առաջին աայանի դատարանի 17.03.2006 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբնիչ դատարանի 10.05.2006 թվականի վճռով դիմումը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի ֆաղաֆաղիական և սնեսական գործերով դալաաի 28.07.2006 թվականի որոամամբ ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաբնիչ դատարանի

10.05.2006 թվականի վճիռը բեկանվել է:

ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաքննիչ դատարանի 29.09.2006 թվականի վճռով դիմումը կրկին մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոքը ներկայացրել է Ռ.Տեր-Վարդանյանը:

Վճռաբեկ բողոքին դատաստիսան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքեր, փաստարկները և դատանքը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներհիշյալ հիմնավորումներով.

1) վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, որը դեմ է կիրառել:

Բողոք բերած անձը նշված դիմումը դատաճառաբանում է հետևյալ փաստարկներով:

Նշված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ նշված հոդվածի 1-ին մասը նախատեսում է ֆաղաֆաղիական և ֆրեական դատավարությունում, ինչդեպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթում որդես վստահորդի ներկայացուցիչ կամ դատարանի մասնակցող փաստաբանի իրավունքների սահմանման կարգը, այն է՝ օրենքով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի նույն հոդվածի 2-րդ մասը համադարձակ (ունիվերսալ) բնույթ է կրում և նախատեսում է փաստաբանի՝ ադագույցներ ձեռք բերելու իրավունքը:

2) վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ ֆաղաֆաղիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված դիմումը դատաճառաբանել է հետևյալ փաստարկներով:

ՀՀ ֆաղաֆաղիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը չի սահմանափակում «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով փաստաբանին վերադրված իրավունքները, քանի որ ադագույց դատանքները միջնորդությամբ փաստաբանն իրավունք ունի դիմելու ինչդեպես դատարանին, այնդեպ էլ դրանք ձեռք բերելու անձամբ:

3) Դատարանը չի կիրառել ՀՀ ֆաղաֆաղիական դատավարության օրենսգրքի 48-րդ և 87-րդ հոդվածների դատանքները:

Բողոք բերած անձը նշված դիմումը դատաճառաբանել է հետևյալ փաստարկներով:

Թիվ 61203305 ֆրեական գործի նյութերը որդես ադագույց անհրաժեշտ են հայցադիմում կազմելու համար, իսկ ՀՀ ֆաղաֆաղիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի համաձայն՝ հայցադիմումին կից ներկայացվում են ադագույցներ, հակառակ դեպքում հայցադիմումն օրենքի դատանքից ելնելով ենթակա է վերադարձման:

ՀՀ ֆաղաֆաղիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ դեմ է ադագույցի իր դատանքների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները, որի հնարավորությունը սլյալ դեպքում սահմանափակվում է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը դատանքել է բեկանել ՀՀ ֆաղաֆաղիական գործերով վերաքննիչ դատարանի 29.09.2006 թվականի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ այլ կազմով նոր քննության:

---

---

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ռ. Տեր-Վարդանյանի դիմումի հիման վրա ՀՀ գլխավոր դասախազության կոռուպցիայի դեմ մայրաքաղաքի բաժնում 11.07.2005 թվականին ՀՀ ֆրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ կետի և 308-րդ հոդվածի 1-ին մասի հասկանիչներով հարուցվել է թիվ 61203305 ֆրեական գործը և կասարվել է նախաքննություն: 30.11.2005 թվականի որոշմամբ նշված ֆրեական գործով վարույթը կարճվել է:

2) Ռ. Տեր-Վարդանյանը որդես փաստաբան, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հիմնով 19.12.2006 թվականին դիմել է դասախառնողին նշված ֆրեական գործի նյութերին ծանոթանալու և լուսադատներին կասարելու խնդրանքով: 22.12.2006 թվականի թիվ 36-24-05 գրությամբ դիմումը մերժվել է:

3) Ռ. Տեր-Վարդանյանին ֆրեական գործի նյութերին ծանոթանալը և դատախազներին կասարելն անհրաժեշտ է այլ դատարանում քննվող մեկ այլ ֆաղագրական գործով աղացույցներ ներկայացնելու համար:

**4. Վճռաբեկ դատարանի դատաբանությունները և եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

*1) վճռաբեկ բողոքի առաջին հիմքը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.*

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանական գործունեությունն իրավադատության գործունեության սեսակ է, որն ուղղված է իրավաբանական օգնություն ստացողի հետադարձ օրինական շահերի իրականացմանը՝ օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով:

Նույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ փաստաբանը, մասնավորապես, իրավունք ունի դիմելու ղեկավար կամ ղեկավար ինֆրակառավարման մարմիններ կամ կազմակերպություններ՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր ստանալու դադարանքով: Նշված մարմիններն ու կազմակերպությունները դատարան են օրենսդրությամբ սահմանված կարգով փաստաբանին տրամադրել դադարանքով փաստաթղթեր կամ դրանց դատախազները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նդատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն սնորհողին և ստանալու այդ տեղեկությունը:

